



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



LGR

N 1090

1837 50

199



SIC ESCUPTO

ՅԱՎԱՐԵՆԻՆՈՒՄ ՅԱՎԱՐԵԿԱՌԵՆԻ

# 1. C. Q. C. P. B. C. '8









Lith. p. Vidor

Imp. p. Chevalier

Peint p. Zarianko

## Цѣшѣлъ Зидшѣрдъ В пѣшѣт и ҃ашарѣвъ:

Его П<sup>ро</sup>мѣни Иванъ Екимовичъ ЛАЗАРЕВЪ,

Камергеръ, Попечитель  
Столичныхъ Армянскихъ церквей и  
Лазаревскаго Института.

S. Ex. JEAN DE LAZAREFF,

Curateur des  
Eglises Arméniennes et de  
l'Institut Lazareff.

ՅԵՐԵՎԱՆԻ  
ԲՈՅՄԵՐԸ ՀԱԳԵՑԵՐՁԱԿԻ

ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԻԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ,

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ


ՆԵՐԴՐՈՒՄԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ,

ԵՒ

ՍԵՆԵԿԱՊԵՏԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴՐԱՆ.

ՅՈՎՀԵՆԻ ՅՈՎՀԻՄԵՆԻ

Լ. Ա. Շ. Ե. Ա. Յ



ՀՀ-35125

ՀՀ-35125

Ի ՄԱՍՔՈՒ

Ի ՏՊԱՐԱՐԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԻԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

1859

43744-6-L

ՀՐԱՄԱՆԱԿ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆԻ:



28178-62

471090-6w+

28 1090

# Յ Ե Կ Ա

ԵՐԵՒ

- Ա. Թարգմանութիւն Յօդուածոյն հրատարակելոյ 'ի Ռուսերէն  
լրագրի Ա. Փեթերպուրկայ՝ յաղագս վախճանի Տ. Յովհաննու  
Յովակիմեան Լազարեանց . . . . . . . . . . . . 1 — 2.
- Բ. Շառ, ասացեալ 'ի հանդիսի յուղարկաւորութեան Հոդա-  
բարձուի Լազարեան Շեմարանի Արևելեան լեզուաց Տ. Յով-  
հաննու Յովակիմեան Լազարեանց հանդուցելոյ 'ի Տէր 'ի 6  
Փետրուարի 1858 ամի . . . . . . . . . . . . 3 — 4.
- Գ. Շառ, ասացեալ 'ի [թաղման Հոդաբարձուի Շեմարանի Արևե-  
լեան լեզուաց, Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց . . 5 — 6.
- Դ. Փոխումն յաստեաց Վսեմափայլ Յովհաննու Լազարեանց Ներ-  
գործական Պետական Խորհրդականի, Կայսերական Սենեկա-  
պետի և Ասպետի դանաղան նշանաց: Հանեալ „յԱրշալոյա  
Արարատեան“ լրագրէն Զմիւռնիայ 1858 ամի, թիւ 567. 7 — 9.
- Ե. Հանեալ 'ի „Մեղու Հայաստանի“ անուանեալ լրագրէն Տըմ-  
իսայ. 1858 ամի, Համար 11 . . . . . . . . . . . . 10—12.
- Զ. Հանեալ 'ի „Մասեաց Աղաւնի“ Ամսագրոյն տպելոյ 'ի Փա-  
րիզ յամի 1858. Մարտ. թիւ դ. յէջ 64—66 . . . . . . 13—14.
- Է. Հանեալ 'ի „Յիշատակարանէ“ Լազարեան Տոհմի “ տպելոյ  
‘ի Մոսկու յամին 1856. էջ 24—31. . . . . . . . . 15—21.
- Ը. Հրովարտակ առ Կառավարող Ծերակոյտն . . . . . . . . . . . . 22.
- Թ. Նամակ Խշանապետի Լազարեան Շեմարանի Քնեազ Օռլո-  
վայ առ Հոդաբարձու նոյն Շեմարանի Ներքին Խորհրդական՝  
Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . . . . . . . . . . . . 23—26.
- Ժ. Պատճէն նամակի Տեառն Յակոբու Վեհափառ. Պատրիարքի  
Հայոց որ 'ի Կոստանդնուպոլիս՝ գրելոյ առ Վեհազնեայ  
Պայտագատն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց. . . . . . . . 27—29.
- ԺԱ. Պատճէն նամակի գրելոյ յամենապատիւ Տեղապահէ Ա. Աթո-  
ռոյն Եջմիածնի 'ի Սրբաղան Կուկաս Արքեպիսկոպոսէ և 'ի  
Սրբաղան Մակար Եպիսկոպոսէ առ Վեհազնեայ Պայտագատն  
Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . . . . . . . . . . . . 30—33.

- ԺԲ. Շառ. Դամբանական, յօրինեալ և ասացեալ 'ի հոգեշնորհ  
Դանիել վարդապետէ Շահնազարեանց 'ի հանդիսի Հոգեհան-  
գըստեան փոխելոյն առ Աստուած՝ Հոգաբարձուի Լազարեան  
Ճեմարանի Արեւելեան լեզուաց՝ Տ. Յովհաննու Յովակիմեան  
Լազարեանց, որ կատարեցաւ յՅ Մարտի 'ի Կաթողիկէ եկե-  
ղեցւոջ Ս. Էջմիածնի . . . . . 34—37.
- ԺԳ. Պատճենք նամակաց Տ. Սարգսի վիճակաւոր Սրբազն Արք-  
եպիսկոպոսի Հայոց Արաստանեաց, դրելոց առ Վեհազնեայ  
Պայազատն Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . . . . 38—40.
- ԺԴ. Պատճեն նամակի Տեառն Յովհաննու Սրբազն արքեպիս-  
կոպոսի Պատրիարքի Ս. Երուսաղեմի առ Նորին Գերազան-  
ցութիւն, Հոգաբարձու եկեղեցեաց Հայոց եղելոց 'ի Ս. Փե-  
թերպուրկ և 'ի Մոսքուա, և Լազարեան Ճեմարանի Արե-  
ւելեան լեզուաց, Սենեկապետ Կայսերական Դրան, Ներքին  
Խորհրդական և Ասպետ, Խաչատուր Յովակիմեան Լազարեանց. 41—43.
- ԺԵ. Պատճեն նամակի Տ. Թաղէոսի Սրբազն արքեպիսկոպոսի  
և Ասպետի, Առաջնորդի վիճակացն Պարոկաստանի և Հընդ-  
կաստանի առ Նորին Գերազանցութիւն, Հոգաբարձու եկե-  
ղեցեաց Հայոց եղելոց 'ի Ս. Փեթերպուրկ և 'ի Մոսքուա,  
և Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, Սենեկապետ  
Կայսերական Դրան, Ներքին Խորհրդական և Աս-  
պետ, Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . . . . . 44—46.
- ԺԶ. Պատճեն նամակի Հասարակութեան Հայոց բնակելոց 'ի  
Նոր Ջուղայ առ Նորին Գերազանցութիւն, Հոգաբարձու  
եկեղեցեաց Հայոց եղելոց 'ի Ս. Փեթերպուրկ և 'ի Մո-  
սքուա, և Լազարեան Ճեմարանի Արեւելեան լեզուաց, Սե-  
նեկապետ Կայսերական Դրան, Ներքին Խորհրդական և Աս-  
պետ, Խաչատուր Յովակիմեան Լազարեանց . . . . . 47—50.
- ԺԷ. Նկարագիր հոգեւոր հանդիսակատարութեանն եղելոյ 'ի տա-  
ճարի վանաց Ամենալիրկչի, 'ի Նոր Ջուղայ, 'ի յիշատակ  
հանդուցեալ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց . . . . 51—54.
- ԺԸ. Ներբող 'ի վեհազնեայ Ազգատոհմն Լազարեանց, և 'ի տիսուր  
յիշատակ վեհազն Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, ա-  
սացեալ 'ի վերայ դերեզմանի Խշանասպետին Աղազարայ՝ պա-  
պոյ պապոյն Աղայ Յովհաննու, որ հանդուցեալ կայ 'ի Ջու-

- |   |        |
|---|--------|
| Դայ, ՚ի խորանի մատրան Սուրբ Մինասայ եկեղեցւոյն, ՚ի<br>և Մայիսի 1858 ամի.  | 55—60. |
| Ժ. Թարգմանութիւն Պարդեական Հրովարտակի Կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Ասպետական Կարդի Ա. Ոթանիւ-<br>լաւայ առ աստիճանի.                                       | 61.    |
| Ե. Թարգմանութիւն Պարդեական Հրովարտակի Կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազա-<br>րեանց Շքանշանն Ասպետական Կարդի Ա. Անայի առ աստիճանի.   | 62.    |
| ԻԱ. Թարգմանութիւն Պարդեական Հրովարտակի Կայսեր Ռուսաց՝ Նիկողայոսի Ա. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակի-<br>մեան Լազարեանց Շքանշանն Ասպետական Կարդի Ա. Ան-<br>այի առ աստիճանի, զարդարեալ Կայսերական Թագիւ.           | 63.    |
| ԻԲ. Թարգմանութիւն Պարդեական Հրովարտակի Արքային Պարսից Նասրետ-Դին-Շահի. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն Առիւծու և Արեգական առ աստիճանի.  | 64—65. |
| ԻԳ. Թարգմանութիւն Յայտարար Նամակի Կոմսին Օռլովայ. որով<br>ծանուցանէ նա Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, թէ<br>հաճեալ է Կայսրն Եռյլ տալ նմա կրել զՇքանշանն Առիւ-<br>ծու և Արեգական զպարդեեալն ՚ի Շահէն Պարսից. | 66.    |
| ԻԴ. Թարգմանութիւն Պարդեական Հրովարտակի Կայսեր Ռուսաց՝ Աղեքսանդրի Բ. որով տուաւ Տ. Յովհաննու Յովակիմեան Լազարեանց Շքանշանն մեծի խաչի Ասպետական Կարդի Առա-<br>քելապատիւ Իշխանին՝ Սրբոյն Վալատիմիրայ ի աստիճանի.   | 67.    |
| ԻԵ. Նամակ Տ. Ակերատեսչի Կայսերական Հասարակաց Մատենա-<br>դարանի Պարոն Ա. Կօրֆայ առ Նորին Գերազանցութիւն<br>Տ. Գ. Ա. Փոփով Ներքին Խորհրդական և Ասպետ.   | 68—69. |



ՕՒԾԵՏՎԿԵՐԸ  
ՅԱՎՀԵՄՆՈՒԹ ՅԱՎԵԿԻՄՆԵՑ  
ԼԵԶԵԲԵՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուածոյն հրապարակելոյ ՚է Ռուսելին լրագրէ Ա. Փելիքուրիայ՝  
յաղագս վախճանէ Տ. Յովհաննու Յովակիման Լաղաբեանց:

՚՚ 6 Փետրուարի վախճանեցաւ յետ կարծժամանակեայ  
ծանր հիւանդութեան, ՚ի հասակի 72 ամաց, Ներգործական  
Պետական Խորհրդական, Սենեկապետ Յովհաննէս Յովակի-  
մեան Լաղարեանց, Հոգաբարձու եկեղեցեաց Լուսաւորչա-  
կան Հայոց Ա. Փեթերպուրկայ և Մոսկուայ, Լաղարեան  
Ճեմարանի արեւելեան լեզուաց՝ որ ՚ի Մոսկուա, պատուա-  
ւոր անդամ Կայսերական Հասարակական մատենադարանի,  
անդամ ժողովոյն սահմանելոյ ՚ի Փեթերպուրկ յաղագս բան-  
տից, և զանաղան ուսումնական ընկերութեանց: Բովանդակ  
կեանք նորա էր անընդհատ շղթայ իմն գործոց բարեաց: Աի-  
րելով նա զբարելայել չութիւն տաճարաց Աստուծոյ, նուի-  
րէր նշանաւոր գումարս ՚ի հիմնարկութիւն և ՚ի պահպանու-  
թիւն եկեղեցեաց: Արք յայց ելանէին կալուածոց նորա ՚ի

Փէրմ նահանգի, զարմանային ընդ հոյակապութիւն տաճա-  
րացն կանգնելոց ծախիւք նորա։ Լաղարեան ճեմարանն՝ հիմ-  
նեալն՝ ի հօրեղբօրէ նորա և ՚ի հօրէն՝ պարտական է նոյն-  
պէս նմա իւրով ընդարձակութեամբ և միջոցօքն յաղագս  
պահպանութեան բաղմաթիւ մանկանց աղքատ ծնողաց։ ՚Ի  
տպարանի՝ որ կառուցեալն է առընթեր ճեմարանիս այսորիկ,  
նմանապէս և յայլ տեղիս, տպագրեալ են ծախիւք նորա  
բաղում օգտակար մատեանք։ ՚Ի լսել նորա դվիշոս տառա-  
պելոց՝ ոչ երբէք հրաժարէր յօդնելոյ նոցա, առանց ամե-  
նեին խորելոյ դկրօն նոցին և զազդ։ Առաւելապէս հոգ տա-  
նէր նա զբարութենէ սակաւաթիւ եղբարց իւրոց ՚ի Քրիս-  
տոս, զորս Աստուած յանձնեաց հոգաբարձութեան նորա։  
կանգնէր վասն ստրուկ շինականաց դպրոցս, հիւանդանոցս,  
աղքատանոցս։ վճարէր զարքունի հարկսն վասն չքաւորաց։  
յօժարութեամբ տայր աղատութիւն ՚ի ստրկական կոչմանէ,  
և երևեցուցանէր ուրախութիւն ՚ի սրտէ՝ ՚ի լինել մեծի կեր-  
պարանախութեանն ՚ի կեանս ստրկացն կալուածատեարց, որ  
սկսաւ ՚ի վերջին ժամանակս։ Յընտանեկան կենցաղավարու-  
թեանն և առհասարակ ՚ի յարաբերութիւնսն առ եղեալսն  
շուրջ զինեւ՝ երևելի հանդիսանայր և զանազանէր հեղու-  
թեամբ և քաղցրութեամբ բարեհամրոյր բարուցն։ Ամենե-  
քին՝ որք ճանաչէին զնա, յիշեսցեն զնա ՚ի բարի, և հեղ-  
ցեն վասն նորա արտասուս ցաւակցութեան։

## Ճ Ա Ա

Ասացեալ 'է հանդիսէ յուղարկառըն-նեան Հագաբար-  
յո-է Լապարեան Շեմարանի Արևելյան լեզուաց

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՀԱԶԱՐԵԱՆՑ

հանգույելոյ 'է Տէք 'է 6 Փետրվարի 1858 ամ:

—

Օոր բազում անդամ տեսեալ էր մեր, և զոր միւս ևս  
անդամ ցանկայաքն տեսանել 'ի կենդանութեան ընդ յար-  
կաւ Տաճարին գիտութեանց՝ յառաւելապատիկ ուրախութիւն  
սրտից մերոց, տեսանեմք աչա այսօր 'ի դագաղի—'ի դագա-  
ղի՝ տեսանեմք յանիարատելի վիշտ և 'ի տրտմութիւն որ-  
բացելոցս զաւակաց՝ որդեգրացս ասեմ Ճեմարանի և վար-  
ժապետաց :

Ո՞չ այսպիսում ակն ունէաք մեք հանդիպել սրտառուչ  
և ցաւագին տեսարանի. ո՞չ այսպէս անշարժ, ո՞չ այսպէս  
անմռունչ անբարբար դքո շրմունսդ կամէաք տեսանել, ո՞  
խնամագութ Հայր մեր, զշրմունսդ ասեմ՝ յորոց ստէպ  
խրախուսական լսէաք բանս առ յառաջադիմութիւն աշակեր-  
տելոց՝ յուսմունս և 'ի վարս բարիս ԱՅԼ, աւաղ, անցին  
այն աւուրք մերոյս բարեբաստութեան, անցին և այն ժամք  
մերոյս ուրախութեան :

Արդ թողեր զմեղ, Հայր, թողեր զմատաղերամ որդե-  
գիրսդ յանակընկալն 'ի հասելում ժամու, փութալով ճե-  
պելով 'ի վշտաց 'ի հանդիստ, և յառժամանակեայ կենացս  
'ի մշտնջենաւորն անցանել: ԱՅԼ զի Յաւիտենականին է այս  
վճիռ անդարձ, մնայ մեղ յայսմ հետէ նորուն իսկ հպատա-

կելով ամենասուրբ կամաց՝ ուղևորել արտասուօք զերինապնաց ճանապարհորդ՝ ցդուռն գերեզմանի :

»Եթէ զարդարութիւն ոք սիրէ, ասէ սուրբ Գիրն, վաստակը նորա առաքինութիւնք են <sup>1)</sup>)« : Զայս 'ի քեզ տեսաք մեք ամենայն լրիւ արդիւնացեալ, 'ի քեզ ասեմ 'ի մեծանուն Պայաղատդ Լազարեան տոհմի, որ յամենայն 'ի կեանսըդ ոչ դադարեցեր յառաքինանալոյ արժանաւորադոյն վաստակովք առ հասարակացն օդտի . այն զի՝ ծառայեցեր դու Աստուծոյ՝ հաւատոցդ ուղղութեամբ և բարեպաշտութեամբ . ծառայեցեր թագաւորի և Տէրութեան՝ հաւատարմութեամբ և մտադիւրադոյն ջանիւք . ծառայեցեր ազգի քում և եկեղեցւոյ՝ սիրով և զերմեռանդութեամբ : Եւ թէպէտ ոչ անվարձ յաստիս մնացին այն քո վաստակը 'ի շնորհաց Օգոստակառ ինքնակալացն ամենայն Ռուսաց, սակայն հաւատացեալ աներկբայ՝ թէ կան արդարոց և յերկինս վարձք, և յիշելով միանգամայն ղանյեղլին զայն վճիռ »Արդարք յաւիտեան կեցցեն, և 'ի Տեառնէ վարձք նոցա <sup>2)</sup>)« ասասցուք միաձայն բարերարեալքս առ 'ի քէն՝ վարժապետք և աշակերտք . »Երթ, երջանիկդ մեր Հայր, Երթ առ որ կոչեցարդ, Երթ հանգչել խաղաղութեամբ՝ առ հանգուցիչն աշխատելոց՝ Քրիստոս, առ լոյսն, առ կեանքն, առ աղբիւրն անմաշութեան, առ Այն՝ որ զերանաւէտ կենացն զիսոստումն՝ իւրովն աւետարանեաց բերանով« . Որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ <sup>3)</sup>) :

(Օրհնեալ է Ստեղծողին հոգւոց և մարմնոց՝ որպէս ձայնն, նոյն և կամք :

յ8 Փետրուարի <sup>4)</sup> 1858 ամի :

'ի Փեթերակուրկ :

Ըստագրեալ և աստցեալ  
Կ ՄՍԵՐԱՅ ՄՍԵՐԵԱՆՑ :

<sup>1)</sup> Իմաստ . Է . 7 :

<sup>2)</sup> Իմաստ . Է . 16 :

<sup>3)</sup> Յովհ . Ժա . 25 :

Ճ Ա Ռ

Ասացեալ՝ է Ասողման Հարաբերայնութեան Շեմաշանք  
Արևելյան ընդուաց,

Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ :

—

Գոյժ անակնկալ մահուան բարեխնամ Հոգաբարձուիդ  
յանսփոփելի ընկղմեաց՝ ի սուդ զղասս որդեգրաց եղելոց ընդ  
Չերովդ քաղցրագութ հովանաւորութեամբ։ Ապաքէն մեծ  
չ կորուստս այս, որ ո՞չ միայն զմեր՝ այլ և զամենայն հա-  
մազգեաց մերոց լնու զսիրտս անօրինակ թախծութեամբ։  
Սգալի՛ է առաջիկայս տեսարան, ուրանօր խոնին երախտա-  
գէտ որդեգիրքդ արտասուալից աչօք զմարմնով գորովագութ  
Շնողիդ։ Անչափ են երախտիք և բարեգործութիւնք անմո-  
ւանալի Հօրդ բարերարի, և յանհնարիցն է մեղ մի մի՝ ի  
թիւ արկանել զբաղմօրինակ բարեգործութիւնսդ, զի զբո-  
վանդակ կեանս Չեր նուիրեցիք յօգուտ աղդի և եկեղեցւոյ։

Որ փառքն էր և պարծանք տանս Արամեան և միայնակ  
պաշտպան զաւակացս նորին, փոխեցաւ յանցաւոր կենցաղոյս  
յանանցն, թողլով մեղ զառաքինութեանց իւրոց և եթ զյի-  
շատակ, որք յաւերժացուսցեն անշուշտ զանուն նորա փա-  
ռօք գարուց՝ ի դարս։ Ո՛չ, յայսմ հետէ մնայ մեղ սուդ ան-  
միսիթար։ զի զբաղցրախօս լեզուն՝ որ խրախոյս մեղ կար-  
դայր, տեսանեմք լոեալ։ զբարեգործ ձեռնն՝ անշարժ մնա-  
ցեալ։ զլուսարիք և զտնանկատես աչսն՝ կափուցեալ։ Ո՛չ այ-  
լով իւիք մարթ է մեղ մեղմացուցանել զմեր վիշտս, ո՛ Հայր  
մեր, եթէ ո՞չ յուշ ածելով միայն զբաղմաթիւ երախտիս  
Չեր։ և երջանիկք լինեաք՝ եթէ յաջողէր մեղ ժառանգորդ  
Չերոցդ լինել առաքինութեանց։

Խոկ՝ ի ժամուս պարտ անհրաժեշտ համարիմք մեղ՝ ըզ-  
վերջին մատուցանել յարգանս խնամակալուիդ մերում՝ որ-  
դիական սիրով, և ջերմեռանդադին աղերսանօք մաղթել յԱ-  
րարշապետէն համագոյից՝ դասել զպատճառդ բարօրութեան  
որդեգրացս՝ ՚ի դասս ընտրելոց իւրոց յիւրումն Արքայու-  
թեան, և տալ կեանս ընդ Երկայն աւուրս Հարազատի Զե-  
րում վեհազինն Խաչատրոյ Լազարեանց՝ ՚ի խնամել նմանօ-  
րինակ բարեգթութեամք զմատաղերամ բազմութիւնն ման-  
կանց, որք դիմեն դան յամենայն կողմանց ՚ի Տունն իմաս-  
տից՝ ՚ի կառուցեալն յԵրջանկայիշատակ տոհմէնն Լազարեանց:

Շաբաթիրեալ և ասացեալ ՚ի Գեղրդայ  
Խաչատրեան յաշակերտէ Լազարեան  
Ճեմարանի Արևելեան լեզուաց :

յ9 Փետրուարի

1858 ամի:

՚ի Փեխթերապութիւն:



Հանեալ „ՅԱՅԼԱՂԻԱ ԵՐԱՐԱՊԵԱՆ“ ՀՅԱԴՅԻՆ Օ. Խ. Ա.  
Նիս 1858 տմ, թիւ 567 :

ՓԱԽՈՒՄԸ ՅԵՍՈՎԻՑ

Վաեմագոյլ Տեառն Յովհաննու Լաղարեանց Ներդորժական Պէտական  
Խորհրդականի, Կայսերական Սենեկապետի և Ապետի շանաշան նշանաց :

Դժբաղդարար կը պարտաւորիմք նոր ու խիստ ցաւալի  
կորուստ մը ծանուցանել, զոր Հայոց ազգը ըրաւ ՚ի 6 Փետր-  
վարի, մահուամը մեծանուն պայազատի ազգասէր Տեառն Յով-  
հաննու Յովակիմեան Լաղարեանց, հոգաբարձուի Ճեմարա-  
նին Արեելեան լեզուաց. որ՝ յետ սակաւօրեայ հիւանդու-  
թեան առ Աստուած փոխուեր է ՚ի հասակի 72 ամաց ՚ի կայ-  
սերանիստ քաղաքն Բեղրոպուրկ :

Մեծահամբաւ հանգուցելոյն և իւր պայծառափայլ գեր-  
դաստանին Հայոց ազգին վրայ ունեցած բարերարութիւները  
բաղմաթիւ և շքեղ են յոյժ։ Մոսկուայի մէջ հաստատեալ  
Լաղարեանց Ճեմարանը, եկեղեցիները որ կառուցեալ են ՚ի  
Բեղրոպուրկ և ՚ի Մոսկուա, և ուրիշ շատ ազգասիրական  
և բարեպաշտական հաստատութիւնները անբարբար վկայ են  
Լաղարեանց տոհմին վեհապանծ զգացմանցը :

Այս անակնկալ մահուան տիսուր լուրը՝ հեռագրական  
գծիւ Մոսկուա հասնելուն, Լաղարեանց Ճեմարանին ուսուց-  
չաց մեծագոյն մասը, և վերին դաստանց աշակերտները ան-  
միջապէս Բեղրոպուրկ դացեր են երկաթէ ճանապարհաւ,  
վսեմափայլ հանգուցելոյն փառաւոր յուղարկաւորութեանը

ներկայ դժուռելու համար, զոր հետևեալ կերպիւ կընկարագրէ մեր յարգոյ թղթակիցն՝ Զարմայր Մսերեանց՝ գրելով բեղրոպուրկէն այսպէս :

„Ամսոյս (Փետրվարի 8ին) մեծանուն ննջեցեալը տարինք սուրբ Եկատերինէի անուամբ կառուցեալ եկեղեցին, որ քաղաքին մէջն է, բազում չայ ժողովրդականաց և օտարազդի մեծամեծաց հետ, որք եկեալ էին այս հանդիսին ներկայ դժուռելոյ համար։ Բայց երբ ննջեցեալը տանէն չէին հանձ, հայրն իմ Մսեր Մսերեանց, դամբանական ճառ մի ասաց ՚ի դիմաց համօրէն վարժապետաց և աշակերտաց։

„Փետրվարի 9ին յետ աւարտման սուրբ պատարագի, այլ ճառ մի ևս Ռուս լեղուաւ կարգաց Մոսկուայի արժանապատիւ տէր Յարութիւն քահանայն։ Յուղարկաւորութիւնն մեծ հանդիսիւ և շքեղութեամբ եղաւ։ Ամենէն առաջ երթային զոյդ զոյդ կարգաւ աշակերտքն Ճեմարանին, յետոյ ուսուցիչք, որք տանէին հանդուցելոյն կայսերապատիւ շքանշաները, ապա դպիրք, քահանայք և գերապատիւ Եփրեմ վարդապետն Ալթընեան, և վերջապէս ննջեցելոյն մարմինը (որ զրուած էր փառաւոր և մեծագին դադաղի մը մէջ) իւրեանց ձեռօք տանէին մէկ քանի անձինք ՚ի ժողովրդականաց մերոց և ՚ի մեծամեծաց Ռուսաց մինչև ՚ի հանգստարանն Հայոց, որ քաղաքէն դուրս է։ Զկնի ննջեցելոյն երթայր փառաւորապէս զարդարեալ կառքն, և յետ նորա երթային ազգականք և բարեկամք հանդուցելոյն, ոմանք կառօք և բաղումք ոտիւք։ Յերկոցունց կողմանց նոցա գնային կերոնակիրք (որք Ռուս լեղուաւ ֆատէւշէւ կոչին) և ձիաւոր զինուորք։ Այս կարգաւս դնալով հասանք հանգստարանի սուրբ Յարութեան եկեղեցին, որոյ մէջ՝ ըեմի առաջև գերեզմանն պատրաստած կայր։ և եկեղեցական կանոնով նշանակեալ աղօթքները կարդալէն յետոյ, Լազարեանց որդեգիր աշակերտներէն երկուքն՝ մի մի ճառ կարդացին Հայերէն և Ռուսերէն, և յետ այնօրիկ ննջեցելոյն մարմինը արտասուօք հանդուցին ՚ի հող տապանի ։

Հայոց ընդհանուր աղղին տիսրալի սուգը մշտաժեւ և այս  
մեծ կորստեան ցաւը անմխիթար պիտի ըլլար անշուշտ, եթէ  
չունենար իրեն պաշտպան և խնամատար վսեմափայլ հան-  
գուցելոյն երկու առատագութ հարազատները, այսինքն աղա-  
խաչատուր և աղա Աաղար Յովակիմեան Լաղարեանց աղգա-  
սէր պայազատները, որոնք Հայոց աղղին փառք և պարծանք  
կըհամարուին իրենց վեհանձնական բարեգործութիւններովը  
և մասնաւորապէս Ռուսաստան բնակօղ մեր համազդի եղ-  
բարցը նախախնամութիւնն են: Վասն որոյ կըրպարտաւո-  
րիմք աղգովին ջերմեռանդ բարեմաղթութիւններ ընել առ  
Աստուած վասն քաջառողջութեան և երկարութեան թան-  
կադին կենաց յիշեալ վսեմափայլ հայկաղուն իշխանաց 'ի  
փառս և 'ի մխիթարութիւն Արամեան աղղիս:



Հանեալ 'է „ԱՇԵՂԻ ՀԱՅԱՊՐՈՎՈՒԽ“ անուանեալ լրագրէ  
Տէխէսայ. 1858 տմ, Համար 11:

Լրագրիս նախնթաց 10 շամարաւն հրատարակեցինք Յով-  
հաննէս Յովակիմեան Լազարեանցի մեծանուն Իշխանի վախ-  
ճանը՝ առեալ քաղաքիս կովկաս լրագրէն, այժմ ստանալով  
՚ի Մոսկովայ ուսումնական յարդոյ Զարմայրէ Մսերեանց՝  
հանգուցելոյ յուղարկաւորութեան հանդիսի մանրամասնա-  
բար անցքն, փութամք տալ ՚ի գիտութիւն ամենայն աղդա-  
սէր մերոց համազգեաց, զոր աշխոյժ և երախտագէտ երի-  
տասարդն այսպէս նկարագրէ:

Անձանուն և բազմերախտ Իշխանն մեր և Պայաղատ՝ Յով-  
հաննէս Յովակիմեան Լազարեանց՝ յետ սակաւօրեայ հիւան-  
դութեան վախճանեցաւ ՚ի Փեթերպուրէ ՚ի 6ին փետրվարի  
տարւոյս :

Այս բօթալի համբաւս հեռագրական գծիւ հասեալ ՚ի  
Մոսկուա՝ մեծ տխրութիւն և զգալի ցաւ պատճառեաց այն  
ամենայն մարդկանց սրտերի վրայ, որք վայելեալ էին կամ  
դեռ վայելում են հանգուցելոյ մեծամեծ բարերարութիւնքն,  
մանաւանդ Ճեմարանի ուսուցչաց և ուսանողաց մէջ լսվե-  
ցան դառնակսկիծ հառաջանք և անհամար ափսոսանք. և որ  
հարազատ որդի կը սդայ այնպէս սրտառուչ իւր ծնողի մահը,  
ինչպէս որ մեք ամենեքեանս սաստիկ սրտացաւութեամք կո-  
ծեցինք մեր անմոռանալի բարերարի և Տեառն անդարձ և  
անակնկալ մահն, բայց ի՞նչ կարէինք անել՝ Աստուծոյ ան-  
դառնալի վճռին ովկ կարող է հակառակել, որ միանգամ  
սահման ունի դրած, որ ամէն մարդ իւր աշխարհային ան-  
ցաւոր կեանքիցը յաւիտենական անանց և անմահ վիճակը  
փոխուի: Վասն որոյ սակաւ ինչ մեք մեղ ու մեղ միսիթա-  
րելով և քաջալերութիւն ստանալով, նոյն օրը մեր Լազա-  
րեանց Ճեմարանի վարժապետաց մեծ մասը (որոց մէջ էի և  
ես և իմ հայրն), և վերին դասատանց աշակերտքն ըուով

իր 20, իւրեանց յատուկ զերմեռանդութիւնը և երախտագիտութիւնը ցանկանալով յայտնի անել՝ շոգեվար երկաթուղի կառքով գնացին 'ի Փ. պուրկ. ուր փետրուարի 8ին երբ որ նախարարք և երեելի մերազնեայ և օտարազգի աստիճանաւորք խուռան հաւաքեալք կային Լազարեանց Խշանաց տան մէջ քահանայից և եկեղեցական սպասաւորաց հետ, նոցա առաջեւ Հայրն իմ ասաց Ճառ դամրանական՝ յիշեալ Ճեմարանի ամենայն աշակերտաց և վարժապետաց կողմիցը, որոյ օրինակն ունիք տեսանել այժմ. և ապա նոյն բազմութեամբ հանգուցելոյ մարմինը մեծաշուք հանդիսով տարանք սուրբ Կատարինեի անունով քաղաքի մէջ շինուած Հայոց եկեղեցին։ Միւս օրը ամսի 9ին պատարազից յետոյ մի ուրիշ Ճառ կարդաց ոռուսերէն լեզուաւ Մոսկուայի արժանապատիւտէր Յարութիւն քահանայն Կեօրչէեանց, որ մեզ հետ եկողներից մէկն էր։ Ճառից յետոյ աւելի ևս հանդիսով և ժողովրդոց և տէրութեան երեելի աստիճանաւորներով յուրակաւորութիւնը սկսուեց այսու օրինակաւ։

Ամենի առաջ երթային կարդաւ ջուխտ ջուխտ Ճեմարանի աշակերտքն, նրանցից յետոյ ուսուցիչքն, որք հանգուցելոյ Կայսերական նշանները ունեին գրկերին՝ կարմիր մախմուրէ բարձերի վերայ. նրանցից յետոյ դպիրք, քահանայք, և գերապատիւ Ասպետ Եփրեմ վարդապետն Ալթնեանց։ Ննջեցելոյ մարմինը դրած էր փառաւոր և մեծածախ դադաղի մէջ, և տանօղքն՝ Փեթերպուրկ մայրաքաղաքի մէջ էլած զերմեռանդութեամբ և սիրով վառված առ բազմերախտ տունն Լազարեանց՝ մերազգի և օտարազգի անձինք էին մինչ 'ի Հայոց հանգստարանի եկեղեցին, որ քաղաքէն դուրս և հեռու է բաւական յոյժ։ Դագաղից յետոյ գալիս էր շքեղազարդ կառքն, և նորանից յետոյ երթային հանդուցելոյ վսեմափայլ ազգականք և բարեկամքն, ոմանք կառօք և շատք հետեւակ, աջ ու ձախ կողմից գնային կերոնակիրք (որք ոռուսերէն ֆակելշչիկ կոչին) և ծիաւոր զինուորք։ Այս կարգաւս գնալով հասանք Հանգստարանի սուրբ Յարութեան եկեղե-

ցին, որոյ մէջ բեմի առաջ պատրաստած կայր Նորախոր գեղեղման։ Թաղման և հանգստեան կարգն ու աղօթքները աւարտելուց յետոյ՝ Լաղարեանց ճեմարանի որդեզիր աշակերտներէն երկուսը մի մի ճառ կարդացին հայերէն և ոռւսերէն։ Հայրէնի օրինակը ահա միւս ճառ հետ էս տեղ կտեսնէք։ Ճառերից յետոյ մարմինը արտասուօք իջուցին գերեզմանի մէջ, որով և վերջացաւ տիրալի տեսարանն այն։

Այսօրինակ եղել վախճան և ամփոխումն ՚ի գերեզմանս հարց իւրոց՝ մեր ամենապատուելի և ամենասիրելի Կշխանի Աղայ Յովհաննու Լաղարեանց՝ բարերարի և անմոռանալի անխոնջ Հոգաբարձուի ուսումնակարօտ մանկանցն Հայոց։ Աւելորդ համարիմ խօսել աստ Հանգուցելոյ կենաց վերայ, որովհետեւ այն ընդարձակ պատմել է Հայրս, Յիշատակարան տոհմին Լաղարեանց ասացեալ գրքի մէջ, յորմէ հետաքրքիր բանասէրն կաբող է տեղեկութիւն ստանալ՝ Վեհաղնեայ Կշխանի ամենայն արած աղդային բարեգործութեանց վերայ։ Ապա մեզ և ամենայն աղդին Հայոց այսուհետեւ մնայ մաղթանս և պաղատանս առ ամենաբարձրեալն Աստուած վերամբառնալ, զի հանգուցելոյ Հոգին իւր լուսեղէն խորանաց մէջ հանգուսցէ, Նորա մարդկօրէն յանցանացն գլութեամբ ներեսցէ, և որք մնացին յաշխարհի կենդանի յետ նորա՝ հարազատքն Աւեհաղն Աղայ խաչատուր և Աղայ Պաղար Յովհակիմեան Լաղարեանք՝ հանգերձ տիկնամբք, դստերօք, փեսայիւք և ամենայն աղդականօք իւրեանց, մխիթարել զամենեսին Հոգւովը իւրով սրբով, փարատել զտիրապատ խաւարն սրտից նոցա, երկարել զնոցին աղդատոհմն մինչեւ ՚ի վախճան աշխարհի վասն իւրեանց անհամահայիշատակ բարեացն, զոր արարին և առնեն յօդուտ ՚ի պատիւ. և ՚ի փառս համօրէն աղդին Հայոց։

Հանեալ 'է „Մատեաց Աղառնի“ Ամսագլույ պահելոյ 'է  
Փաբրիզ յամ 1858. Մայու. Ալ- է. յէջ 64—66:

—

Մեծ ցաւով սրտի լսեցինք այս օրերս մեր Թուսաստանի  
հայկաղն եղբարց նա մանաւանդ թէ լոլոր Հայկաղանց ըրած  
մէկ նոր կորուստը։ Յովշաննէս Կոմս Լաղարեանց՝ որ ոչ  
ինչ ընդհատ իւր աղնուատոհմ՝ աղդատոհմովը՝ իւր անըստ-  
գիւտ վարուքն ու աղդասէր ոգւովն և բարի դործօք ծանօթ  
էր և սիրելի հասարակաց մեր աղդին, եօթանասնեմեան պա-  
րարտ ու բաղմարեղուն կեանքը կնքեր է Փետրուարի <sup>6/18</sup>ին,  
Երթալով՝ ի խնդիր իւր հոյակապ հարցն և արեանառու աղ-  
դակցացը՝ որոց փառաւոր անունը ժառանդեր էր, ու ոչ մի-  
այն անաղօտ էր զայն պահէր, հապա և ևս առաւել պայծա-  
ռացուցեր հայրեննաց և օտարաց առջեւ։

Խոր մանրապատում կենսագրութիւնը ուրիշ անդամի թող-  
լով, հոս միայն աղնիւ կենդանագիրը ընթերցողաց առջելը  
դնեմք, ու Փեթրպուրկի Հետիսացին Մելու ըսուած լրագրոյն  
մահագոյժը թարգմանեմք, զոր հրատարակեց նաև Տեղական լր-  
րագիրը և բազում այլ լրաթուղթք Գաղղիոյ։

„Հայոց Մեծաց հնագոյն ու ամենէն անուանի ցեղերէն  
մէկը, որ դարէ մը ՚ի վեր Թուսաց տէրութեան ծառայու-  
թեան մէջ է, Լաղարեանց ցեղը կըսեմ, այս Փետրուարի  
<sup>6/18</sup>ին իւր դլիսաւոր անդամոցը մէկը կորսնցուց, որ է եօթա-  
նասնեմեան Յովշաննէս աղա Լաղարեան, արդիւնական խոր-  
հրդական պետութեան Թուսաց, ինքնակալին սննեկապետ,  
Փեթրպուրկի կայսերական հասարակաց դրատանը պատույ  
անդամ, հոգաբարձու եկեղեցեայն Հայոց որ ՚ի Փեթրպուրկ  
և ՚ի Մոսքուա, և Լաղարեան արևելեան լեղուաց Ճեմարա-  
նին որ ՚ի Մոսքուա, անդամ՝ Փեթրպուրկի բանտից ժողովոյն,  
և բազում այլ ուսումնական ընկերութեանց։

„Յովհաննես աղայն այր բարեգործ եղեւ, այս բառիս ընդարձակագոյն առմամբը: Իւր Ճոխութեան մեծագոյն մասը և բոլոր իւր կեանքը նուիրեց՝ ի բարիս գործել կամ հասրակաց օպտել, և իւրոյ աղգին բարոյական և մտաւոր յառաջադիմութեանը ձեռնտու հանդիսանալ: Այս աղնուական ցեղին ըրած հիմնարկութիւնները, որոց մէջ Փեթրպուրկի և Մոսքուայի հայափառ եկեղեցինները՝ իրեն առատ խնամոցը նիւթ էին եղած, որ մինչև ՚ի շոայլութիւն կերթար: Փերմի կուսակալութեան մէջի գեղեցկաշէն Հայոց եկեղեցւոյն ինքն է հիմնադիր:

„Իւր կալուածոցը մէջ եղած հպատակացը հետ՝ մարդասիրութեամբ և բարութեամբ լի, ետքի դժուարին տարիներուն մէջ կուզէր որ անոնց պահպանութեանն ու պիտոյիցը համար պէտք եղած ծախըերը՝ իւր եկամտիցը վրայէն առնուի, յառաջ քան իւր առանձնական ծախըերն ընելու: Ասով, Աղեսանդր Բ Կայսեր դեղացւոց աղատութեան համար ըրած հրամանը՝ ինքը մեծաւ փութով ընդունեցաւ:

„Աշհկանացու մարմինը դրուեցաւ իւր տանը շիրմին մէջ ՚ի մատրան անդ Հայոց որ ՚ի դերեղմանատան Սմոլենսկայ, ոչինչ հեռի ՚ի Փեթրպուրկէ”:



Հանեալ 'է,, Յէշապահարանէ Լազարշան Տովմի՛ առջելոյ  
'է Առակուս յամին 1856. էջ 24 — 31:

Խշանապետն Յովհաննէս Յովակիմեան Լազարեանց \*)  
(որ անդաւակ Հայրն է Խմբելոցն 'ի Լազարեան Ճեմարանի  
որ 'ի Մոսկուա՝ դասուց դասուց մանկուոյ աղգիս) յաղագս  
բաղմաղէմ ծառայութեանցն՝ զորս ծառայեալ է Տէրութեան  
Ռուսաց, և յաղագս բաղմօրինակ բարերարութեանցն առ  
իւր Համաղգիս, փառաւորագունից արժանացեալ է Անտի-  
ճանաց պատուոյ՝ և պարգևաց տուելոց 'ի մեծազօր Կայսե-  
րացն Ռուսաց՝ յԱղեքսանդրէ Առաջնոյ և 'ի Նիկողայոսէ  
Առաջնոյ:

Որք զայսմ ամնայնէ լի՛ ցանկան ունել տեղեկութիւն,  
ընթերցչին զքաղուածն հանեալ 'ի նորա ծառայութեանցն  
Ցուցակէ, որոյ այս է թարգմանութիւն:

„Պարան Նորին Կայսերական Մեծութեան Սենեկապետ,  
Ներգործական Պետական Խորհրդական՝ Յովհաննէս Յովա-  
կիմեան Լազարեանց, Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի  
Արևելեան լեզուաց, ունի զՃքանշանսն Ասպետական Կար-  
գաց՝ Ս. Աննայի աստիճանի՝ զարդարեալ Կայսերական  
Թագիւ. Ս. Մթանիսլաւայ աստիճանի. և Ս. Վլատիմի-  
րայ դ աստիճանի: Ունի ևս զՊատուադիրն անուանեալ Նշան  
Ս. Յովհաննու Երուսաղէմացւոյ. զՆշան գովանի և անա-  
րատ ծառայութեան վասն 35 ամաց. զՃքադրամ Աղնուա-

\*) Ծնունդ սորա 'ի Մկրտութեան Ցուցակի նշանակեալ կայ ըստ այսմ.  
,, 1786, Փետրվարի մէկ, Երեկոյեան 6 սհաթու՝ մին կարտին (իմա՝ քա-  
ռորդին) աղայ յովակէմին Աստուած որդի պարգևեաց. 12ին մկրտեցին.  
Կնքէղն տէր պետրոսն էր, և կնքահայրն աղայ մինասն, և անունն եղին  
Յովհաննէս. Աստուած ըարի յիշատակ արասցէ և զօրացուացէ ”:

կանութեան վասն Հայրենեաց պատերազմին՝ որ 'ի 1812 ամի, և դնշան Առիւծու և Արեգական աստիճանի՝ տուեալ յարքայէն Պարսից հանդերձ պարզեադրով յամին 1853։ Անուն Լաղարեանց Տոհմի արձանադրեալ է յԱզգաբանական մատենի նահանգին Եարոսլաւայ, յառաջնում մասին։ 'ի Ս. Փեթերպուրկայն՝ 'ի չորրորդ մասին, և 'ի Մոսկուայն՝ յառաջնում մասին։ Հրովարտակն յաղագս Ազնուականութեան տուեալ է նախահաւու նորա Պաղարայ նաղարեան Լաղարեանց 'ի Կայսերուհեղին Կատարինեայ Բ. յՅ Հոկտեմբերի 1776 ամի։

Տոհմային կալուածքն են այսոքիկ։ 'ի վիճակս Փերմ նահանգի՝ յանուանեալսն Փերմսքի, Սոլիքամսքի, Օխանսքի, և Չերժընսքի, ընդ հաւասարազօր տիրողութեամբ Եղբօր նորա Ներդործական Պետական Խորհրդականի՝ Սենեկապետի՝ Խաչատրոյ Յովակիմեան Լաղարեանց, 'ի ժամանակի վերջին՝ իններորդ Աշխարհագրին՝ ստրուկք և ընդոծինք յարական սերէ՝ ոգիք 19,222։ Եփարանք աղի՝ 'ի վիճակին Սոլիքամսքի. գործարանք ձուլելոյ զչուկուն և ղերկախ՝ 'ի վիճակսն Փերմսքի և Սոլիքամսքի. տուն մի փայտեայ 'ի Մոսկուա. տուն մի փայտեայ և տուն մի քարեայ 'ի Նիժնի-Նովկորոտ. արծաթագինք՝ արդար վաստակօք ստացեալք՝ ոգիք 27 յարական սերէ՝ 'ի Տանիլովսկի վիճակի նահանգին Եարոսլաւայ։ Պաստիարակեցաւ 'ի գլխաւոր ուսումնարանին Գերմանաց ւոց՝ որ առ Ս. Պետրոս Եկեղեցեաւ Աւետարանականաց 'ի Ս. Փեթերպուրկ։

Յանդ Տեսուած։

1801. 'ի Յուլիսի 3, Էմաւտ 'ի ծառայութիւն յեղեալն 'ի Մոսկուա 'ի Պիւանն Կայսերական Ատենի Արտաքին գործոց։

— 'ի Հոկտեմբերի 9, Բարձրագոյն Հրամանադրով կարգեցաւ Թարգման 'ի սակս առաջիկայ դտանելոյ 'ի հանդիսի Թագադրութեան Կայսեր։

1804. 'ի Յուլիսի 27, նշանակեցաւ 'ի գործս Կայսերական Առևնի յԱսիական Բաժնի։

1805. 'Ի Դեկտեմբերի 31, 'ի նմին կալով պաշտաման՝ պարապեցաւ 'ի թարգմանութիւնս 'ի Հայ լեզուէ, և ըստ առաջադրութեան նոյն Ատենի՝ ամբարձաւ 'ի կառավարող Շերակուտէն յաստիճան Ատենական Գատողական կամացի:
1807. 'Ի Փետրուարի 5, կարգեցաւ 'ի խումբս Երկրային կամքաղաքական զինուորաց նահանգին Ս. Փեթերպուրկայ: — 'Ի նմին ամի ընկալաւ 'ի պարգև զՃքադրամ ոսկի, և զմատանի աղամանդեայ:
1810. 'Ի Դեկտեմբերի 31, ըստ առաջադրութեան կայսերական Ատենին՝ ամբարձաւ 'ի կառավարող Շերակուտէն յաստիճան Պալատական Խորհրդականի:
1811. 'Ի Եկտեմբերի 13, ըստ առանձին կայսերական Հրամանագրի՝ արձակուրդ ընկալաւ գնալ 'ի կաւկասեան Զրբուղիս առ 'ի բժշկութիւն:
1812. 'Ի Մարտի 19, ոչ ինչ օգտեալ 'ի զրոց անտի՝ դարձաւ եմուտ վերստին 'ի ծառայութիւն:
1814. Յօդոստոսի 30, ընկալաւ զՃքադրամն Ազնուականութեան՝ սահմանեալ վասն պատերազմին Հայրենեաց որ եղեւ յամին 1812:
1815. 'Ի Մայիսի 3, կացուցաւ Հոգաբարձու Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց որ 'ի Մոսկուա:
1816. 'Ի Սեպտեմբերի 10, արժանացաւ վարձատրութեան՝ Պատուադիր Նշանաւ Ասպետական Կարգի Ս. Յովհաննու Երուսաղեմացւոյ:
1817. Հրաւիրեցաւ 'ի Զինուորական Հանրական Նահանգապետէն Մոսկուայ՝ լինել թարգման 'ի Գիւանատան նորա:
1818. 'Ի Դեկտեմբերի 31, ընկալաւ զաստիճան Ատենական Խորհրդականի՝ հանդերձ Աւագութեան պատուով:
1819. 'Ի Մայիսի 31, փոխադրեցաւ ըստ առաջնոյն 'ի գործս կայսերական Ատենին: — 'Ի 28 օրեայ արձակման իւրում 'ի Մոսկուա՝ 'ի կիրակ զժամանակսն յօդուտ պաշտամանն՝ 'ի թարգմանութիւնս 'ի Հայ լեզուէ՝ ըստ յանձնարարութեանն

Եղելոյ՝ ի Կառավարչէ Դիւանին Կայսերական Ատենի  
Արտաքին գործոց՝ ի Ներքին Խորհրդականէն Մալի-  
նովսքեայ՝ ի յարաբերութիւնս դատաստանական տե-  
ղեաց և զանազան խնդրոց :

1823. ՅԱպրիլի 18, փոխադրեցաւ յԱսիական Բաշխն Նա-  
խարարութեան Արտաքին գործոց :

— ՚Ի Նոյեմբերի 15, ամբարձաւ յաստիճան Պետական  
Խորհրդականի՝ Հանդերձ Աւագութեան պատուով՝ ի  
31էն Գեկտեմբերի 1820 ամի :

1826. ՚Ի Սեպտեմբերի 22, ՚ի Վարձ ջերմեռանդօրէն կատա-  
րելոյն զպաշտօնն յանձն Եղեալ նմա յԱսիական Բաշ-  
խէ առ ընթեր յայնկոյս - Կաւկասեան և Քիրկիղեան  
Պատղաւորաց Եղելոց՝ ՚ի Մոսկուա ՚ի Ժամանակի Թա-  
դադրութեան Կայսեր Նիկողայոսի, արժանացաւ ըն-  
դունել զՃքանշան Ասպետական Կարգի Ս. Աննայի ը  
աստիճանի :

— ՚Ի Նմին իսկ Ժամանակի փոխադրեցաւ առ Զինուորա-  
կան Հանրական Նահանգապետն Մոսկուայ՝ ՚ի սակս  
կատարելոյ զղանազան յանձնարարութիւնս :

2829. ՚Ի Փետրուարի 19, Բարձրագոյն Հրամանաւ Հաստա-  
տեցաւ ՚ի կոչման Պատուանուն Ատենակալի ՚ի Տես-  
չութեան Ասպետական Նշանի Ս. Անդրէի Նախակոչ  
Առաքելոյ՝ առանց Հասութիւն, կրելով զսահմանադրեալ  
Նշանն :

1830. ՚Ի Մարտի 15, ըստ վկայութեան Զինուորական Հան-  
րական Նահանգապետին Մոսկուայ՝ ծանուցաւ նմա բա-  
րեհաճութիւն Գերամբարձ Միապետին :

— յՕգոստոսի 22, Ամենողորմաճաբար պարզեատրեցաւ  
Նշանաւ գովանի և անարատ ծառայութեան վասն 20  
ամաց :

1831. ՚Ի Յունուարի 22, ՚ի Վարձ ջերմեռանդութեանն առ  
ծառայութիւն ՚ի պաշտաման Հոդաբարձուի Լաղարեան  
Ճեմարանի Արևելեան լեզուց՝ արժանացաւ բարեհա-

Ճութեան գերամբարձ Միապետին՝ յայտնելոյ ՚ի ձեռն  
Օժանդակ Զօրապետին Հեծելաղօրու՝ Կոմսին Աղեք-  
սանդրի Պենկենտորֆայ :

- ՚Ի Մայիսի 22, ՚ի ժամանակի մաղձայոյդ ախտին (Խօ-  
լերա) ճարակելոյ ՚ի Մոսկուա, օգնական գտաւ Թաղա-  
պետի Մեասնիցքի մասին, և վասն ջերմեռանդութեանն  
՚ի փոյթ ջանից ՚ի կարճել զցաւն, ըստ կարգաւորու-  
թեան Ժողովոյն Նախարարաց՝ Ամենողորմածաբար  
վարձատրեցաւ Թագաղարդ Շքանշանաւ Ասպետական  
կարգի Ս. Աննայի ը աստիճանի :
- ՚Ի Յուլիսի 19, Նշանակեցաւ Անդամ Ժողովոյն կար-  
գելոյ ՚ի կատարումն տեսարանի Ռուսական ձեռագոր-  
ծաց ՚ի Մոսկուա. և վասն փութապէս ՚ի կատար ածե-  
լոյն զգործս զայս՝ Ամենողորմածաբար պարզեցաւ  
նմա մատանի աղամանդեայ՝ հանդերձ քանդակաւ փա-  
կադրի անուան Նորին Կայսերական Մեծութեան :

1832. ՚Ի Մայիսի 1, ՚ի կատար ած զշինութիւն մատենադա-  
րանի Դիւանատան Զինուորական Հանրական Նահան-  
գապետին Մոսկուայ, որում՝ ըստ Հրամանագրութեան  
նոյն Նահանգապետի՝ սկիզբն արարեալ էր ՚ի 16էն  
Դեկտեմբերի 1830 ամի:

1834. ՚Ի Հոկտեմբերի 22, որով Անդամ Ժողովոյն կարգե-  
լոյ ՚ի սակս կառուցման Յաղթական Կամարին որ ՚ի  
Մոսկուա, ՚ի վարձ աշխատութեանն՝ Ամենողորմածա-  
բար պարզեատրեցաւ Շքանշանաւ Ասպետական կար-  
գի Ս. Վլատիմիրայ դ աստիճանի :

1835. ՚Ի Մարտի 14, Նշանակեցաւ Անդամ վասն յօրինմանն  
՚ի Մոսկուա՝ Երկրորդ տեսարանի արուեստակերտուածոց:

1836. ՚Ի Յունվարի 19, վասն տեսարանի արուեստակերտ-  
ուածոց եղելոյ ՚ի Մոսկուա, Ամենողորմածաբար պար-  
զեատրեցաւ կոչմամբ Սենեկապետի Դրան Նորին Կայ-  
սերական Մեծութեան :

1837. ՚Ի Փետրուարի 24, վասն ջերմեռանդութեանն և վաս-



տակոյն յօդուտ հասարակաց, Ամենողորմածաբար ամբարձաւ յաստիճան Ներգործական Պետական Խորհրդականի:

1838. 'Ի Դեկտեմբերի 12, վասն տպագրութեան Հայ և Ռուս բառարանին, արժանացաւ բարեհաճութեան Գերամբարձ Միապետին՝ յայտնելոյ ՚ի ձեռն Փոխանակի Գլխաւոր Կառավարչին Կայսերական Ատենի՝ Կոմսին Նեսսելըոտայ:

1839. 'Ի Մարտի 25, յաղագս գովանի Եղանակաւ և զերմեռանդօրէն կատարելոյն զպաշտօնն Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արեելեան լեզուաց՝ որ ՚ի Մոսկուա, Ամենողորմածաբար վարձատրեցաւ ոսկեայ ադամանդայեռ տիփով պնչաղեղոյ՝ Հանդերձ քանդակաւ փակագրի անուան Նորին Կայսերական Մեծութեան:  
— 'Ի Նոյեմբերի 10, ՚ի լրումն ցանկութեանն ցուցելոյ յիւրմէ, և ՚ի սակս յարակցութեանն ընդ Զինուորական Հանրական Նահանգապետին Մոսկուայ, դասեցաւ ՚ի թիւս Անդամոց Նախարարութեան Արքունի Հասից՝ իւրովք սեպհական ծախուք յառաջ քան զմտանելն ՚ի նշանակեալն պաշտօն:

1840. յ(Օ)գոստոսի 22, Ամենողորմածաբար պարզեատրեցաւ Նշանաւ գովանի և անարատ ծառայութեան և գերագոյն արժանաւորութեան:

1841. յԱպրիլի 11, ՚ի տրիտուր յարատե զերմեռանդութեանն յօդուտ Արեելեան լեզուաց Ճեմարանին Լազարեանց՝ որ ՚ի Մոսկուա, վարձատրեցաւ Շքանշանաւ Ասպետական Կարգի Ս. Սմանիսլաւայ աստիճանի:

1845. 'Ի Յուլիսի 27, ՚ի լրումն Բարձրագոյն Հրամանին եղելոյ ՚ի 6էն Յուլիսի այսր ամի, յաղագս ՚ի բաց Հանելոյ ՚ի Թուոյ պաշտօնէից զաստիճանաւորսն կարդեալս ՚ի պէտս առանձին յանձնարարութեանց Նախարարութեան Արքունի Հասից, ևս և զայնոսիկ՝ որք ունին զհանապազօրեայ պարապումն ՚ի նմին Նախարա-

բութեան կամ յայլ Ատեանս, նմանալէս և առ ՚ի  
սահմանափակել զթիւ նոցին առ հասարակ, ՚ի լաց  
հանաւ ՚ի թուոյ պաշտօնէից Նախարարութեան Ար-  
քունի հասից :

— ՚Ի Հոկտեմբերի 5, Ամենողորմածարար պարգևատրե-  
ցաւ Նշանաւ գովանի և անարատ ծառայութեան և  
գերագոյն արժանաւորութեան վասն 35 ամաց :

1848. ՚Ի Յունիսի 15, ՚ի ցոյց առանձին բարեհաճութեան  
առ յարատեակ ջերմեռանդութիւն նորա ՚ի պահպա-  
նութիւն Լաղարեան Ճեմարանին Արևելեան լեզուաց՝  
որ ՚ի Մոսկուա, պարգևատրեցաւ Շքանշանաւ Ասպե-  
տական Կարգի Ս. Աննայի ու աստիճանի :

1851. ՚Ի Փետրուարի 12, ՚ի տրիտուր նուիրանաց 60,000  
ըռւպլի արծաթոց ՚ի պէտս հաստատութեան Նախակր-  
թական բաժնի ՚ի Լաղարեան Ճեմարանի Արևելեան  
լեզուաց՝ ՚ի յիշատակ մատաղահասակն Յովհաննու  
Լաղարեանց, ծանուցաւ նմա Կայսերական շնորհակա-  
լութիւն :

1853. ՚Ի Մայիսի 20, ՚ի յարգանս մեծամեծ նուիրաբերու-  
թեանցն եղելոց ՚ի նմանէ ՚ի պահպանութիւն Լաղա-  
րեան Ճեմարանին Արևելեան լեզուաց, և ՚ի տարա-  
ծումն լուսաւորութեան, վարձատրեցաւ Թագաղարդ  
Շքանշանաւ Ասպետական Կարգի Ս. Աննայի ու աս-  
տիճանի :

---

Ե՛ և Պտտուանուն Անդամ Ս. Փեթերպուրկայ և Մոս-  
կուայ Կայսերական Ընկերութեան բնաղննաց, Անդամ Կայ-  
սերական Ընկերութեան Շինական Տնտեսութեան, և Ան-  
դամ Ասիական Ընկերութեան Փարիզոյ. նաև՝ ըստ Բարձրա-  
գոյն հրամանի՝ Անդամ Ժողովոյն սահմանելոյ յաղագս բան-  
դից, և այլ առանձին Ժողովոյ սահմանելոյ յաղագս չքա-  
ւորաց :

Հ Յ Ո Վ Ա Ր Տ Ա Կ

ԵՐ ԿԵՆՏՎԱԾՈՒ ԴՕԵԲԱԿԱՅՑՑԻ

—

՚Ի վերայ հիման 13երորդ յօդուածոյ կանոնադրութեան Լաղարեան Շեմաբանի արևելեան լեզուաց՝ հրամայեմք . զի հոգաբարձու այսր Շեմաբանի եղիցի այժմեան Օդնականն հոգաբարձուի , Ահենեկապետն Գրան ՄԵՐԱՅ , Կերպործական Պիտական Խորհրդականն Խաչատուր Լաղարեանց , Ամենողորմածաբար սպարդելով նմա , ՚ի տրիտուր փութաջան ծառայութեանն և առանձին ջերմեռանդութեանն յօդուտ նախանշանակեալ Շեմաբանին՝ զասիճան Կերպին Խորհրդականի :

՚Ի ընագրին Խսկական ձեռամբ ՆՈՐԻՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ գրեալէ

« ԱՆԵՔՍԱՆԴՐ » :

՚Ի Ա . ՓԵՂԵՐԱՊՈՒՐԿ

՚Ի 20 Մարտի 1858 ամի:

Ա-ՂԵՂ Է . ԱՐԴՈՒՆԱԿԱՆ ԱՄԵՆԱԴՐՈՒՅԻՇ Ա . ՊԱ-ԲԻ-ԴԻ-Ղ :



ԳԼԽԱՆԻՐ ԻՇԽԱՆԱՊԵՏ


ՈՂՈՐՄԱԾ ՏԵՐ

ԼԱԶԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆԻ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ԽԱԿԱԿՈՒՄ ՅԱՀԱՀԵԱՆ.

'ի Ս. Փեթերպուրկ  
'ի 22 Մարտի 1858 ամի.  
Համար 390:



Օ առաքեալն 'ի Չերմէ Գերաղան-  
ցութենէ ընդ յարաբերական թղթոյ  
'ի 10էն այսր Մարտի ընդ Համարով 49,  
զհաշուեցուցակ Լաղարեան Ճեմարա-  
նի Արևելեան լեզուաց 'ի 1857 ամի,  
և նոյնպէս զյարաբերական թուղթու  
Չեր, Ողորմած Տէր, 'ի 10էն և 'ի 11էն  
Մարտի ընդ Համարով 48 և 53, յորս  
Դուք հաճեցայք հաղորդել. Նախ՝ յա-  
ղագս նուիրելոյ հանդուցեալ եղբօր  
Չերոյ Ներդործական Պետական Խոր-  
հըրդականի՝ Յովհաննու Յովհակիմեան  
Լաղարեանց զ50 հաղար ոռուպլի, և  
Չեր զ10 հաղար ոռուպլի արծաթ՝ յօ-  
գուտ վերոյիշեալ Ճեմարանի, և երկ-  
րորդ՝ յաղագս ցանկալոյ Չերոյին Գե-  
րաղանցութեան և հանդուցեալ եղբօր  
Չերոյ, զի այժմէն իսկ մոցէ ընդ լիա-  
կատար իշխանութեամբ Ճեմարանին  
տունն՝ որ 'ի Մոսքուա՝ 'ի Մեասնից-  
քիյ անուանեալ մասին, յերրորդ թա-  
ղի ընդ Համարով 240, հանդերձ ա-  
մենայն շինուածովքն՝ որ առ նմին, և  
գետնովն, այն՝ որ նուիրեալն էր 'ի

Զենք յամին 1853, բայց մնացեալ ընդ իշխանութեամբ Չերտով, բարերախտութիւն ինձ վարկայ ամենախոնարհաբար առաջի առնել թագաւոր Կայսեր :

‘ԵՌԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆ, տալով լիակատար իրաւունս զերմեռանդութեան Չերոյին Գերազանցութեան և հանգուցեալ եղբօր Չերոյ Յովհաննու՝ առ օդուտ աղդային լուսաւորութեան, և առանձին իմն ուշադրութեամբ ղննեալ ղհաշուէցուցակն Լաղարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց յամի 1857, ամենողորմածաբար հաճեցաւ հրամայել.

1) ‘Ի պատճառս վախճանելոյ՝ի կենաց Ներգործական Պետական Խորհրդականին՝ Յովհաննու Յովակիմեան Լաղարեանց՝ նշանակել զՉերդ Գերազանցութիւն՝ Հոգաբարձու Լաղարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց և, Աղորմած Տէր, ’ի նշանակ Փութաջան ծառայութեան և առանձին զերմեռանդութեան Չեր յօդուտ Ճեմարանին՝ ամբառնալ զՉեղ յաստիճան Ներքին Խորհրդականի :

2) ‘Նշանակելով զՉեղ Հոգաբարձու, դպրատաւորութիւնն Օդնականի Հոգաբարձուի Լաղարեան Ճեմարանի՝ զսահմանագրեալն ’ի 21 Դեկտեմբերի 1849 ամի յաւելուածովն և վուխումամբ քանի մի յօդուածոյ Կանոնադրութեան Լաղարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց, և ցույցակաւ այսր Ճեմարանի, իրը զաւելորդ ունայնացուցանել, և վասն այսորիկ ևս խափանել զ11 և 13 երորդ յօդուածոն Կանոնադրութեան Ճեմարանի :

3) Օղրամնն ’ի նորոյ նուիրեալս ’ի հանգուցեալ եղբօրէ Չերմէ ’ի Յովհաննէ Յովակիմեան Լաղարեանց՝ յօդուտ Լաղարեան Ճեմարանի Արևելեան լեզուց՝ զյիսուն հաղարաբաթ ոռւպլիս, և զդրամնն նուիրեալս ’ի Չենք, Աղորմած Տէր, ’ի յիշատակ այսր եղբօր Չերոյ՝ զտան հաղարաբաթ ոռւպլիս, որոց գումարն է վաթսուն հաղար ոռւպլիս արծտիթ, ընդունել յօդուտ նախայիշեալ Ճեմարանի, առաջարկելով Իշխանապետի նորին ’ի գործ դնել զայս գումար յառաւել յարդիւնաւորս և յօդնակարագոյնս վասն այսր Ճեմարանի,

և 4) Օտունն՝ որ դտանի ՚ի Մոսքուա՝ ՚ի Մեասնիցըից  
մասին, զնուիրեալն յեղբօրէ Զերմէ ՚ի Յովհաննէ Յովակի-  
մեան և ՚ի Զերդ Գերաղանցութենէ յամին 1853 յօդուտ  
Ճեմարանին, այժմէն իսկ հանդերձ ամենայն շինուածովքն  
և գետնովքն պատկանելովք նմին տան՝ ընդունել ընդ լիա-  
կատար տիրութեամբ Լաղարեան Ճեմարանի:

Օայսօրինակ Բարձրագոյն Հաճութիւնն զեկուցանելով  
Զերում Գերաղանցութեան վասն պարտուպատշաճ տնօրէ-  
նութեանց, և շնորհաւորելով Զեղ, Աղորմած Տէր, զնոր-  
նշանսն Միապետին առ Զեղ ողորմութեան, ունիմ պատիւ-  
առաքել առ Զերդ Գերաղանցութիւն զվաւերացուցեալն պատ-  
ճէն Բարձրահրաման Հրովարտակի ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ՄԵՇՈՒԹԵԱՆ՝ տուելոյ Կառավարող Ռերակուտին ՚ի 20  
այսր Մարտի՝ վասն նշանակելոյ զԶեղ Հոգաբարձու Լաղա-  
րեան Ճեմարանի՝ ամբառնալով յաստիճան Ներքին Խորհր-  
դականի:

Ընդ այսմ Հարկ Համարիմ յաւելուլ՝ թէ այժմէն իսկ  
արարեալ են յինէն յետագայ տնօրէնութիւնքդ:

1) Պալխաւոր Կառավարչի Վերատեսչական Բաժնի Քաղա-  
քական տեսչութեան տուաւ զեկուցումն զՀաստատութենէ և  
զամբարձմանէ Զերոյին Գերաղանցութեան, յաղագս մուծանե-  
լոյ ՚ի Բարձրագոյն Հրաման ըստ Քաղաքական տեսչութեան:

2) §. Կախարարին Երաւանց՝ ծանուցաւ որպէս վասն  
Բարձրագոյն վճռահատութեան յընդունել Լաղարեան Ճե-  
մարանի զնուիրեալն յօդուտ նորա՝ զդրամս և զտուն, նոյն-  
պէս և վասն ունայնացուցման պաշտաման Օգնականի Հոգա-  
բարձուի նշանակեալ Ճեմարանի, վասն Հաղորդելոյ Կառա-  
վարող Ռերակուտին, և

3) §. Օինուորական Հանրական Կահանդապետին Մոս-  
քուայ ծանուցաւ վասն ընդունելոյ այժմէն իսկ ընդ լիակա-  
տար Կշխանութեամբ Լաղարեան Ճեմարանի զտունն նուի-  
րեալ ՚ի Զենք յօդուտ այսր Ճեմարանի, վասն աղատելոյ

զայն 'ի քաղաքական տեղահարկէ՝ ըստ Հիման 63 յօդուածոյ կանոնադրութեան Ճեմարանի:

♦աճեցարուք, Զերդ Գերազանցութիւն, վստահ յիմս լինել 'ի լիագոյն յորդ և 'ի հաւատարմութիւն.

(Ի բնագրին) Քնեազ Օռլով:

Ուղիղ է. Հոդաբարձու Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց Ներքին Խորհրդական Խաչատուր Լազարեանց:



Պատճեն նամակի Տեսոն Յակոբոս Աւելիոս Պատրիարքի ձայնը ով 'ի Կոստանդնուպոլիս՝ Գրելոց առ Աւելիոս Աստվածածնի Խովանացուց Հոգակի մետք Լազարեանց :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Աւելիոս Աստվածածն.

Հ Ա Յ Ո Յ

Ի Կ Ա Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս



Քաղաքական վիճակ Ազգի մերոյ  
երջանկանայ բաղմութեամբ Աստուա-  
ծասիրաց և Ազգասիրաց . և պակասե-  
լով այնպիսեացն՝ 'ի թշուառութիւն  
խոնարհի . Զայս իրաւամբ տարածա-  
նէին առաջի Տեառն 'ի հնոցի անդ ե-  
րեքին մանկունքն, եթէ ոչ դոյ 'ի ժա-  
մանակի յայսմիկ և այլն . իբրև մի  
միայն պատճառ թշուառութեան իս-  
րայէլեան ժողովրդեան խոնարհելոյ 'ի  
գերութիւն :

ԱԵՔ արդարեւ յերկար ժամանա-  
կաց կորուսեալ զԱզդային ազատու-  
թիւն՝ միսիթարիմբ իրաւամբ Աստուա-  
ծասէր և Ազգասէր համազգի բարե-  
րարաց յանձանձելով զհայրենի աղդ  
և զեկեղեցի , և զայնպիսի անձինս  
հոյակապս համարիմբ իբրև զբիրս ա-  
շաց , ուխտիւ խնդրելով 'ի Տեառնէ  
Աստուծոյ՝ ցքանի մի դարս ձգել զա-

ւուրս կենաց նոցա, և յայսմանէ կարէ Զերդ կորովախորհուրդի վսեմութիւն գուշակել անշուշտ, զո՞ր թախիծ և յաւո՞չ պատճառեսցէ մահ միոյ յայնպիսեացն :

Յարանց յայսպիսեաց կարդի ղառաջին տեղին ունի անշուշտ Զերդ Աստուածախնամ Աղնիւ դերդաստան՝ ի Խորհրդեան բնաւից համազգեաց տարածելոց՝ ի սիմիոս զանաղան տեղեաց, և կարի իրաւամք. իրը զի անհամար գործ բարեպաշտութեան և Ազգասիրութեան իրեւ զլոյս արեւու յամենայն ուրեք արձակեալ են զիւրեանց անաղօտ շառաւիղ անսուտ համբաւու. ուստի կարէք դիտել՝ եթէ՝ ի վերայ իւրաքանչիւր անձանց գերդաստանին Զերոյ զո՞ր խնայութիւնս արդեօք ո՞չ առնիցեն :

Յայսպիսի զգածման Եղելոց թէ չիցէ աղօթարարութիւնս մեր առաջինն, սակայն վստահիմք ասել թէ՝ և ոչ վերջինն. ուստի և վախճան կենաց Զերումդ Պայաղատ Հարազատի և Ազգասէր Բարերարի Աղայ Յոհաննու, որ՝ ի լրագրոց հաղորդեցաւ մեղ իրեւ զգառն բաժակ, ընկղմեաց՝ ի թախիծ և ՚ի սուդ, դիտելով չափ՝ զի աղդ մեր մեծի կորստեան և վնասու դիպաւ. այլ զի ո՞չ բաւեմք հակառակիւ անհասանելի խորոցն Աստուծոյ, մաղթելով՝ ի նմանէ զյաւերժական հանգիստ հոգւոյ նորա յերկնից Արքայութեան ընդ Աստուածասէր իշխանաց տօնելեաց յեկեղեցւոց, և միսիթարիչ լինել Զեղ Հոգւով սրբով, զօր ամենայն աղօթաւոր պաշտօնաւորիմք առ ինքն, զի Աջավ իւրով հովանաւորեալ Զերում վսեմութեան՝ յերկարեսցէ զԱղգօդուտ կեանս Զեր՝ ի միսիթարութիւն վշտահար թաղծելոցս՝ և որպէս ակն ունիմք անտարակոյս, ընդ Զերումդ սովորական՝ ի խնամս և ՚ի բարեղարդութիւն Ազգի և Եկեղեցւոյ վաստակոց և աշխատութեանց՝ և զնորին հոգելոյս Հարազադի Զերոյ զմասն աշխատութեանց, զորս ելիք և փութայաւ առ կոչեցաւն՝ առնուլ զվարձս նոցա, յանձին ունիցիք իրեւ ժառանգք նորա գովանիք. և բարեխնամ Տէր՝ որ պատրաստէ լսել աղօթից մատուցելոց առ ինքն, մի՛ ցուցցէ մեղ զպա-

կասիլ Աղքաշահ կենաց Զերոյ, այլ հաճեսցի ՚ի շնորհ Ալ-  
դի մերոյ ձգել ընդ երկայն աւուրս:

Զերում Վեհապնեայ Պայաղատութեան  
մշտնջենաւոր աղօթարար.

Պ. Կ. Յակով Աբեղովսկով :

9/21 Ապրիլ. 1858:



Պատճեն նամակի գրելոյ ցամշնապառի Տեղադրութեան Ա.  
Անուոյն Եջմաննի՝ 'ի սրբազն Դահիս Երեսովիս  
աղուէ և 'ի սրբազն Արակար Եղիսկողուէ առ Վեհազ-  
նեայ Պայտազարն Խաղաղուոց Յովակիմն Լազարեան:

—  
ԶԵՐԴ ԳԵՐԱԶԱՑՈՒԹԻՒՆ

### ԱԴԱՅ ԽԱՇԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՎԱԶԱՐԵԱՆՑ

ՈՂՈՅՆԾ ՏԵՂ.

Օհարուածօղն մերոց Հոգեկան մխիթարութեանց զգրու-  
թիւն Ձեր Գերազանցութեան արձակեալ առ մեղ 'ի 6ն  
անցեալ Մարտի՝ ընկալաք 'ի 27ն այնը ամսոյ. զոր ընթեր-  
ցեալ՝ կարի յոյժ վշտացաք ընդ մահ ամենահարազատին Ա-  
ռաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ և առաքինագործ  
բարերարին բաղմերամ մանկանց Համազգայնոց և օտարա-  
զանց Ահանձն աղայ Յովհաննու Յովհակիմեան Լազարեանց՝  
միակ արենակցի և Հոգեկցորդ Եղբօր Ձերոյ Սիրեցելոյն 'ի  
մէնջ:

Էյս բօթաբեր նամակ Ձեր Գերազանցութեան յիրաւի  
'ի տխրութիւն Համակեաց ոչ միայն զմեղ, այլ և զորս ընդ  
մեղ՝ դասք Հոգեորականաց Արարատեան Մայր Աթոռոյ սրբոյ  
կաթուղիկէ Եջմիածնի. քանզի մեք այն ինչ օր ըստ օրէ ակն  
կալեալ սպասեմք յառաջադիմութեան աղգի Հայոց 'ի պէս  
պէս ձիրս, փառս և արտօնութիւնս ընդ ձեռն աղգապար-  
ծանք և մեծահամբաւ Համաղգի Իշխանաց, ընդ Հակառակն  
մերոց այսպիսի ակնկալութեանց՝ Հետղիւտէ զրկիմք յայն-  
պիսի բարերարաց, յորոց մի էր և Ահանձն Իշխան Հոգե-

լոյս աղայ Յովհաննէսն Յովհակիմեան Լաղարեանց . Նա արդարեւ վաստակեալ զամենայն աւուրս կենաց իւրոց յօդուտ աղգի և եկեղեցւոյ՝ լի գործովք բարեպաշտութեան և արդասաւոր պտղովք աղգասիրութեան՝ գնաց առնուլ զվարձս իւրոցն վաստակոց , և հանգչիլ ’ի հոսանուտ և տարժանաւոր աստի կենաց՝ ըստ տիրականին հրաւիրանացն ձայնից „ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և ծանրաբեռինք և ես հանգուցից զձեղ ” : Իսկ մեք զգամք յանձինս՝ թէ մեծ նպատակ պարծանաց աղգի մերոյ պակասեցաւ յաղգատոհմէ իւրմէ և յաղղէ իսկ վայելողէ բազմօք զարդասիս երախտաւորութեան նորին : Նա յետ վճարելոյ աղգի իւրում զպարտիս աղգասիրութեան բազում արդիւնաւորութեամք՝ վճարեաց ’ի վերջին աւուրս ծերութեանն և զպարտս վճռեալս յԱստուծոյ վասն ամենայն հասակի . ըստ այնմ՝ „ Հող էիր և ’ի հող դարձիս ” : Իսկ մեղ և աղգի Հայոց մնայ յաւէրժայուցանել զյիշատակ առաքինազարդ հանգուցելոյն յաւիտեանս կենաց մերոց ’ի վճար նորայն բարերար ներգործութեանց :

Չեր Գերազանցութիւն , առ այս նպատակ՝ սեպուհ պարտաւորութիւն մեղ համարեալ՝ առաջադրեցաք միաբանական ուխտի սրբոյ Էջմիածնի , զի յ30 անցեալ Մարտ ամսոյ կատարեսցի արժանավայել հանդիսիւ հոգեհանգիստ վասն յիշատակի առաքինազարդ հանգուցելոյն . ուստի ’ի նոյն թիւ ամսոյ յաւուր նոր կիւրակէի նորոգեալ զթախիծ տրտմութեան սրտից մերոց՝ տուաք մատուցանել զփրկարար խորհուրդ պատարագի ’ի վերայ սուրբ սեղանոյ Էջման բանին Աստուծոյ՝ վասն փրկութեան հոգւոյ առաքինապարդ հանգուցելոյն . զկնի աւարտման սրբոյ պատարագի շուրջառաղգեստեալ ամենայն Եպիսկոպոսաց՝ վարդապետաց և քահանայից՝ հանդերձ ջահիւք և մոմեղինօք , խաչիւք և խաչվառօք ելին յատեան . ուրանօր նախապէս մին ’ի միաբանից սրբոյ Ամոռոյն Էջմիածնի՝ վարդապետն Դանիէլ Շահնազարեանց՝ Խօսեցաւ ’ի լուր հոգեորականաց և ժողովրդականաց զճառ դամբարանական ըստ պատշաճի առարկային , զորոյ զպատճէնն ’ի

միասին ընդ այսմ մատուցանեմք՝ ի տես Զերդ Գերազանցութեան. յաւարտ որոյ սկսան ժամասացք ողոք ձայնիւ երգել,, Անսկիզըն Աստուած սկիզբն արարչութեան,, և զայլս ըստ պատշաճին. Յայսմիկ հանդիսի կատարման հոգեհանգըստեան բաժանեցաւ ամենայն դասուց հոգեորականաց՝ մեծաց և փոքունց՝ ևս և աղքատաց առ դրան Տաճարին կացելոց՝ առատ պաշտամաղրամ վասն փրկութեան հոգւոյ հանգուցելոյն. և յետ ամենայնի այսոցիկ հրաւիրեալ զամենայն ժողովրդականս՝ ի սեղանատունն Աթոռոյս՝ մեծարեցաք բաղմածախ ուտելեօք և ըմպելեօք ղբաղմութիւնն հոգեորականաց և ժողովրդականաց, հարստաց և աղքատաց, ուրանօր ևս բարեմաղթեալ յԱստուծոյ վասն վարձատրելոյ զհանգուցեալն անանց բարեօք՝ արձակեցաք զիւրաքանչիւրսն յիւր գործ բազում հառաջմամբ սրտից :

Գերազանց Իշխանապետ, Թէպէտ անջատումն հոգելոյս հանգուցելոյն յաղգատոհմէ Զերմէ և.՝ ի Զէնջ՝ վասն Զեր է զդալի յոյժ, ցաւալի և արտասուելի, սակայն պարտ և պատշաճ է Զեղ քրիստոնէական բարեպաշտութեամբ հնազանդիւ սուրբ կամաց Արարչին ամենեցուն, որ զիտէ հարկանել զսիրտս և բժշկել. ըստ այնմ,, Ես հարկանեմ և ևս բժըշկեմ,, և ոչ երբէք թողուլ՝ ի ինամարկօղ ձեռաց իւրոց զայնոսիկ՝ որք հաւատով կարդան առ նա. ապաքէն աղաւնցուք զամենաբարձեալն Աստուած, որով կեամբ և շարժիմք և եմք, որպէս զի լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալ Անհաղնեայ աղայ Յովհաննու Լաղարեանց՝ ի լոյս երեսաց իւրոց, վարձատրելով ղառաքինութիւն Նորին Գերազանցութեան անանց բարեօք, պահպանեսցէ զԶեղ և զԻշխանուհի ամուսին Զեր զքոյր և զքեռորդիս Զեր, զդստերս Զեր և զամուսինս Նոցին հանդերձ դեռահասակ որդւովք իւրեանց՝ ի բարօրեալ երջանկութեան՝ ի մշտնչենաւորութիւն բարեյիշատակ Տոհմին Լաղարեանց, ընկալցի զչափաւոր արտասուս Զեր՝ ի հաճոյս բարերար կամաց իւրոց, և ցողեսցէ՝ ի վերայ Զեր և զերամեծար Գերգաստանի Զերոյ յիւրոց առա-

տապարգել ողորմութեանց, միսիթարելով զվշտագնեալ սիրտս  
Չեր իւրովք հայրախնամ դժութեամբք այժմ և միշտ :

Եմենաջերմեռանդ հոգւով ողջունելով զՉեղ, մնամք խո-  
նարհ աղօթարարք վասն մշտնջենաւորութեան ողորմութեան  
Աստուծու ՚ի վերայ տոհմին Լազարեանց,

ՈՂՈՐՄԱԾ ՏԵՐ  
ԶԵՐՈՒՄ ԳԵՐԱՊԱՆԱԳՈՒԹԵԱՆ  
ամենախոնարհ ծառայք

ԳԱԿԻԱ ԱՐ + ԵԱՂԵԿՈՎՈՒ :  
ՄԱՀԱՅ ԵԱՂԵԿՈՎՈՒ :

Համար 14

՚ի 5 Ապրիլի 1858 ամի.

՚ի սուրբ Էջմիածին :



Ճ Ա Ր Դ Վ Ե Ր Ա Կ Ա Ն

Յ Ո Ր Ի Ն Ե Ա Լ Ե Ւ Ա Լ

՚Ի հոգեւնորհ Պանիկը վարդապետէ Շահնապարեանց՝ ի  
հանդիսէ Նոգեհանգապեան ժոխելոյն առ Ե՞՞՝ Նոգա-  
բարձունքի Լաղարեան Շեմարանի արևելքան լշղուաց՝ Տ.  
Հազիաննու Յովակիմեան Լաղարեանց, որ կապարեցա-  
յ30 Արարուք՝ ՚ի Կալուղիկէ Եկեղեցու-ջ Ա. Էջմիածնէ:

՚Ի Զեր՝ ՚ի Զեր դէմս, սրբազն Հարք և սիրագումար  
դասք հոգեորականաց, տիսրութեանն քօղ, որ ՚ի Խորին զգաց-  
մանց ՚ի Զէնջ անձնիւր սրտից ՚ի ձախօղ իմն պատահարէ  
նշմարի, ո՞չ առթեսցէ արդեօք և յիս զկիրս սրտառուչս  
Հետազօառութեան սգաղգաց պատճառին։ Ո՞չ յորդիսցէ յիս  
զբանս ոգեշարժս ողբոց Հեծութեանց յորս՝ բերին ամենայն  
տիսրութեամբ զգածեալք՝ ոմանք ՚ի կորուստ սիրելեաց, կէսք  
՚ի հարուածս բաղդին, և բազումք ընդ մահ համազգեաց և  
համատոհմից իւրեանց։ Եւ կարի՛ յիրաւուն։ Քանզի զի՞նչ  
քան զայս առարկայ՝ տիսրութեան սրտի ինձ զգալի առիթ,  
և ո՞չ ինձ և Զեղ միայն, այլև լրութեան իսկ ազգի, հո-  
գեկան զգայութեանց ցաւ կոկծեցուցիչ։ Յանցելում ամի  
յանակնկալս հարուածով մահու զերախտաւորն Ազգի և Եկե-  
ղեցւոյ Հայրենեացս զմեծ քահանայապետն Ներսէս կորու-  
սանել։ իսկ յայսմ ամի ՚ի բարերար և Երախտաւոր իշխա-  
նէն համօրէն Հայազգեացս ընդ ամենօրհնեալ Տէրութեամբ  
Կորին կայսերական Մեծութեան ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈՂԱՅԵ-  
ՎԻՉԻ եղելոցս զըկիլ։

Այս պայտ ցաւ տրտմառիթ մեզ՝ մեզ հոգեորական  
դասուց միալանիցս սրբոյ Էջմիածնի քան վթանն վեհազնեայ  
Տեարց Լաղարեանց 'ի ճահի է յանձինս բերել։ Մեզ առա-  
ւել՝ մեզ, որք զբարերազդութիւն աղքի առիթ հոգեկան  
բերկրութեան մերոյ ճանաչեմք, և զձախորդութիւնն սգոյ  
և տրտմութեան ծնունդ։ Մանաւանդ զի սոյն այս բաղմե-  
րախտ իշխանն մեր և Պայտապատ Յովհաննէս Յովհակիմեան  
վեհազնեայ Տեարց Լաղարեանց, որ 'ի Խորին ծերութեան  
իւրոյ եօթանասուն և երկու ամեայ հասակի յանցաւոր աս-  
տի կենաց առ յաւիտենական և անանց կեանս վերափոխե-  
ցաւ, ոչ միայն յաղագս Տանն Լաղարեանց բարի շառաւիլ  
վերընձիւղեցաւ յօրհնեալ 'ի բարի արմատոյ, այլ և յա-  
ղագս համօրէն Հայազգեաց որպէս զծառ պտղաբեր 'ի գնացս  
ջուրց մշտահոսան շնորհաց սրբոյ Հոգւոյն տնկեցաւ. ընդ  
որոյ քաղցր հովանեաւ զովանային ամենայն հայազգի մանկ-  
ակը յանապատ երաշտութեան և կոյր տգիտութեան թափա-  
ռեալք, և պասքեալք կենարար ջրոյն լուսաւորութեան 'ի  
պտղաբերութիւն առաքինութեանց և ուսմանց. Քանզի եր-  
ջանիկս այս 'ի վերայ այլոց իւրոց դիւցազնեայ մեծագոր-  
ծութեանց յաւետ գոլով բորբոքեալ 'ի սէր լուսաւորու-  
թեան աղքի՝ Հայր հասարակաց հոգեոր զաւակաց որդեգրաց  
Ճեմարանին իւրեանց դերապանծ օրինակաւ զանձն իւր հան-  
դիսացուցանէր. ոչ միայն ժողովելով զնոսա ընդ յարկաւ  
գիտութեանց Արևելեան լեզուաց Ճեմարանին իւրեանց 'ի  
Մոսկուա առ 'ի վերստին ծնանել զնոսա բարոյականապէս որ-  
դիս լուսոյ և որդիս տուունչեան, այլ և հանապազրդեան  
յորդորական բանիւ իւրով յառաքինութիւնս կրթելով. և  
օրինակաւ բարի վարուց իւրոց 'ի հանդէս աղքասիրութեան  
խրախուսելով, զորոյ զերախտեաց զանմահ յիշատակս ամե-  
նայն որբացեալ որդեգրաց սորա այժմ 'ի միտ բերելով՝ ար-  
դարեւ ոչ հանդուրժեն թանալ ղծնօտս աղի արտասուօք աղ-  
բերականց իւրեանց :

Հեն չեն իմ կամք և ոչ բանք իմ բաւական, սրբազան

Հարք՝ Ճոխութեամբ բանից գովեստից՝ ի հոչակ հանել զամենայն ղմեծարար գործս աղգապարծանս Հանդուցեալ՝ ի Տէր վեհազն իշխանիս, որք՝ ի յիշատակարանս Տոհմին Լաղարեանց արձանագրեալ են, այլ զՉեր սրտի վերախտաղգածութեանց զցաւ ընդ մահ Դորին վիհանձնութեանն՝ ի յայտ ածեմ, որք ոչ սակաւ զրկեալ համարիք զՉեղ՝ ի միսիթարութեանց՝ ի վերայ այսքան անմիսիթարութեան Չերոյ՝ ի լուր մահու Դորին:

Արդարեւ և Պատրիարդական մայր աթոռն մեր սուրբ Էջմիածին ո՛չ սակաւ տիսուրէ ընդ մահ գորին, տեսանելով զորդիս իւր ղհայազդի մանկտիս արդեանս դարու, որք զօրէն առաջին դարու Հայազդեաց՝ ի զաւառն Արտազու զՎարդան, զԱրսէնն ցանկալի, և զԽորէն Խորհրդականն որոնողաց՝ լալադին աչօք՝ ի մայրաքաղաքին Ռուսաց Տէրութեան զԱղայ Յովհաննէս զՊայաղատ իշխանն մեր վեհազնեայ Տանն Լաղարեանց որոնեն։ Սակայն՝ ի զուր. զի գնաց մարդ՝ ի տուն իւր յաւիտենից։

Ո՛չ ոք՝ ի թագաւորաց և յիշխանաց, ո՛չ ոք յաղքատաց և՝ ի տանկաց այլազդ սկիզբն կալաւ ծննդեան՝ և այլազդ մեռանիցի։ Զի մի մուտ է ամենեցուն յայս աշխարհ և հասարակաց ելք։ Սակայն գործք բարեաց, երախտաւորութիւնք հասարակութեան, ողորմածութիւնք՝ ի վերայ տնանկաց որբոց և այրեաց և հայրինասիրութիւնք և աղգասիրութիւնք զամենայն ունակացելոցն և գործադրաց իւրեանց զյիշատակ մահուան որոշեն՝ ի հասարակաց մահուանէ։ ղորեղդալի ցաւօք սրտից իւրեանց սգոյ առիթ համարին ինքեանց ամենայն հասարակութիւնն։ Իսկ մեք այսոքիւք առաքինութեանց բարեաց տեսակօք տեսանելով Ճոխացեալ զՀանգուցեալ՝ ի Տէր վեհազնեայ իշխանս։ իրաւամբ ընկղմիւք արդէն՝ ի խորս տրտմութեան ընդ մահ Դորա։ Մահ ասեմ՝ որ սմա զանմահութիւն խոստանայ և զառաքինութեանց իւրոց զվարձուց հատուցումն, և բազմաց հայազդեացս յանբաւ բարերարութեանց Դորա զարդացելոց՝ զանմիսիթար սուդ և

զտրտմութիւն։ Իսկ մեք առ ՚ի ցուցանել զսէրն մեր առ առաքինասէր հանգուցեալ հայազգի մեծանուն իշխանս՝ ըստ չափու սիրելոյ նորա ղազգն մեր և զեկեղեցին՝ իրաւամբ և արժանաւորապէս այսօր պարտուորեցաք համօրէն հոգեորական և միաբանական ուխտիւք Պատրիարդական Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի հանդերձ աղօթիւք և Խընդրուածովք առաջի Խորհրդեան Փրկագործ պատարագի ՚ի տաճարի փառաց սրբութեան Մօրն լուսոյ ղսորայն կատարել ղկարգ հոգեհանգստեան շքեղ հանդիսիւ։

Ուրեմն՝ սրբաղան Հարք՝ աստանօր Խառնեալ ղմեր սրտի բանաւոր պատարագ մաղթանաց ընդ Խնդրուածոց ղինուորեալ Եկեղեցւոյս՝ աղաչեսցուք ղԱստուած։ որպէս զի ղիոգի Հանգուցեալ Պայազատ Յովհաննու Յովհակիմեան Լաղարեանց յաղթական մրցանակաւ առաքինական և աղգաշահ գործոց ՚ի յաղթական Եկեղեցւոջ ընդ կամարարս անուան իւրոյ պսակեսցէ։ Եւ ղիամօրէն Տանն Լաղարեանց ղտխրութեան ղարտօսր յաշացն սրբեսցէ սուրբ Հոգին մխիթարութեան՝ յամայր ամօք և յաւերժական բարեկենդանութեամբ պահպանելով ղմնացորդս սորա զվեհաղն իշխանս ղԱղայ Խաչատուր և ղԱղայ Վաղարն Յովհաննէսեան Լաղարեանց հանդերձ տիկնամբք, ղստերք, փեսայիւք և ամենայն աղգականօք իւրեանց։ Այլև Խնայելով յաղգն մեր և յեկեղեցին՝ մի՛ այլ ևս այսօրինակ զգալի հարուածովք ղմեղ հարուածեսցէ։

Եւ ղջեր սիրտ առաւել զգածեալ կրիւք անիխարատ տըխրութեան՝ հանդիսագիր Վեհափառ Հայր մեր հասարակաց, որ անցեալ վեհ հանդիսանայք ՚ի գլուխս հոգեորական Դասուց համայնից Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, Հայրն Երկնաւոր մխիթարեսցէ ղթալով ՚ի Հոգի ննջեւելոյս, յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալք և կան առաջի ահաւոր բեմին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք յաւիտեանս. ամեն։

Պատրժնեւ նամակաց Տ. Առքաէ վէճակառը Արքազան Եր+  
եղիսկողունք Հայոց Աշտարակեաց, Գլելոց առ Անհազ-  
նեաց Պայտազան Խաղաղուոց Յովակիմեան Լապացէանց:

ՎԵՀԱԶՆԵԱՑ ԻՇԽԱՆ

ԱՂՋՄԱՆ ՏԷՐ.

Լրադիրն տեղւոյդ գուժեաց յականջս ամենայն աղդա-  
սիրաց զցաւալի մահ Անհաղնեայ Կշխան Յովհաննէսի հա-  
րաղատի Չերոյ և Աղդի Բարերարի, արդարեւ ամբոխեաց պըլ-  
տորեաց ղբերկութիւնս սրտից բոլոր Հայրենասիրաց, ըստ  
որում բարձաւ՝ ի միջոյ, ո՞չ նա՝ որ միայն շքով անձին իւ-  
րոյ և Ճոխութեան փայլէր յաշխարհի և ըստ ամենայնի ան-  
շահ և անօգնական իւրումն Աղդի, այլ նա՝ որ ղճոխութիւն  
գանձուց, ղչոգ մտաց, ղջան անձին դարձուցեալ էր գլխո-  
վին յօգուա Աղդի և եկեղեցւոյ, և իրաւամբ ժառանգեալ  
ունէր ղբարերար անուն. Ուրեմն ո՞ր սիրտ ապառում չկարէ  
ողբալ ղնոյն ընդհանուր կորուստ. Բայց Անհաղնեայ Կշխան,  
հաւաստի լերուք, թէ Կշխանապետն երկնից Աստուած կո-  
չեաց ղնա՝ ի հատուցանել նմա ղվարձս իւրոց բաղմաթիւ  
բարերարութեանց, ղորս եցոյց նա յօգուտ Աղդի և եկեղեց-  
ւոյ, ղի եթէ բաժակի միոյ ցուրտ չըոյ ո՞չ կորուսանէ Աս-  
տուած ղվարձս, ղեարդ ապա ղմեծն և ղարժանաւորն թողու  
՚ի բաց, ո՞չ երբէք. Դուք լերուք ողջ, պահեսցէ Տէր ղջեղ  
՚ի բարօր վիճակի ՚ի պարծանս Աղդի և եկեղեցւոյ մերոյ, և  
մէք մնամք.

Խորին Յարդանօք

Խոնարհ Աղջմարար

Արք Եղիսկողունք Հայոց Առքէն:

՚ի և Ապրելի 1858 ամի.

՚ի Տփխիս:

ԶԵՐՈՅԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ,

Ա ՀԻԱՂՆԵԱՅ Իշխան.

Օ ամենայարգելի Նամականիս Չեր ընկալայ, և վասն գուժաբեր լինելոյն վշտացայ հոգւով չափ, բայց Վեհաղնեայ Իշխանապետ, Չեղ քաջ յայտնի են անփոփոխ կամք վերին Նախասահմանութեան և անդառնալի վճիռ նորա. ապա ո՛ կարէ կա՛լ հակառակ այնմ, ո՛չ ոք. ուրեմն ամենայն կամք նորա և հրաման պաշտելի ՚ի մէնջ յաւէտ ճանաչի, որում մատուցանի մշտնջենաւոր փառք և պատիւ:

Ուստի նոքա սգասցեն անմիսիթար, որոց անուանք յետ զգալի մահուն ծածկին ընդ խաւար շամանդաղաւ, և միայն ՚ի կոթողս՝ նոցին գրին անուանք, որք և ՚ի ձեռն ժամանակաց թէ վաղ և թէ անագան անհետանան խսպառ, իսկ անուանք Տոհմին Լազարեանց գրեալ կան ոսկեղէն տառիւ ո՛չ միայն ՚ի շերիմս, այլ ՚ի դպրութիւնս երկնից՝ ՚ի թիւս Աղդասէր և Աստուածահաճոյ իշխանապետաց և ՚ի սիրտս բոլոր Հայկաղանց, որ ո՛չ ժամանակն, և ո՛չ աշխարհ կարէ ջնջել զյիշատակս այնոցիկ անուանց յազդէ և յաշխարհէ յաւիտեանս յաւիտենից:

Ես կամէի ըստ Չերոց կամաց տալ գրել ՚ի կաղէթի ղնոյն տոմսակ, բայց որովհետեւ գրեալ իսկ եր նախ քան ղնոյն գրութիւն, վասն որոյ լոեցի, և եթէ կամիք՝ վերստին տացից ՚ի գրել:

Վ եհաղնեայ Իշխանապետ, շարժել զսիրո Չեր ՚ի բարին՝ պարտք ինձ համարիմ. վասն որոյ վստահանամ ՚ի գրել, թէ երկոքեան որդեգիրք Չեր Տէր Յակովեանցն և Արովեանցն են ականաւորք բարուք և գիտութեամբ, և ո՛չ ունին ածել յապաշտ զպատճառն. և ունին լինել յօգուտ Ազդի և եկեղեցւոյ: Կման նոցա ՚ի վարս՝ ՚ի լսարս և յաշխոյժ բնու-

Թեան են իմ երեք սանունք, Ռոստօմ և Աղեքսանդր Մանդէնեանց և Արտաշէս տէր Գաւթեան, որք են յառաջադէմ յուսմունս և 'ի սահմանեալ թիւ ամաց. Եթէ բարեհաճիք ընդունել յԱզգալոյս Ճեմարանն Զեր, բարւոք առնէք. Վասն զի նոքա ունին լինել ըստ ժամանակին պիտանիք, որպէս գուշակեմ ես, զի ես երբէք ոչ վստահանամ լինել պատճառ վատաց և ապաշնորհաց առաքելոյ ՚ի դոյն Ճեմարան. Եթէ գոյ տեղի՝ խնդրեմ հրամայել, իսկ Եթէ ոչ՝ Զեր են կամք: Մնամ խորին յարդանօք.

Չերտ Գերաղանցութեան  
Խոնարհ Աղօթարար

Արք Եղիսակունու Հայոց Սարդէս:

'ի 11 Ապրելի 1858 ամի.

'ի Ք. Տիկիս:



## ՊԵՏՈՎԵՇՆ ԿԵՐՄԵԿԻ

Տեսան Յովհաննու Արքապան արքեպիսկոպոսի Պատրիարքի  
Ա. Եղուապահի առ Ա. Խ. Պատրիարքութիւն, Համբաւար-  
յու- Եկեղեցեաց Հայոց Եղեղոց 'ի Ա. Փէնքը Պատրիարքի և 'ի Ա. Խ.  
Խաչատր, և Լապարեան Շեմաքանի Արքեղելան ընդուաց,  
Անեկաղեց Կայսերական Պարան, Անելքին Խայրին Կայսերական և  
Եպոջեց, Խակագործոց Յովհանի Ապարեանց:

## ԳԵՐԱԶԱՆՑԱՓԱՅԼ ՎԵՀԱԶԱՆԵԱՑ

Պայտապահ Տէք.

Ատոյդ է, թէ այն որ ծնեալ է 'ի մահկանացու բնու-  
թիւն՝ մեռանի. և ոչ ոք մեռաւ՝ որ չեր մեռանելոց երբեմն  
»Ապա և Հարազատ Եղբայր Չերում Սեպուհ Գերափառու-  
թեան՝ Կայսերապսակ Մեծանուն Աղայ Յովհաննէս՝ թէպէտ  
և զգեցաւ զկերպարան մահու, բայց այն էր միայն յաղագս  
փակեալ գոլոյ նորա ընդ կամօք արարչին սահմանողի զմահ  
Աստուածեղէն արդարութեամբն 'ի վերայ բնութեանս. զի  
մահ ոչ համարի մահ՝ եթէ կանխեաց զնա կեանք բարե-  
կրօն. ուստի և մարմնոյ անջատումն այսպիսւոյ՝ է հրաժեշտ  
տալ 'ի լուծական կենցաղոյս՝ միայն առ 'ի ոգեխառնիլ ընդ  
Աստուծոյ անլուծանելի «Ապա չեշխեմք ամենեին՝ զնորին  
աստի կոչումն համարել մեռելութիւն՝ որպէս զսոսկականի  
ուրուք. զի ամենայն լուսավառ միտք մարդկան՝ որք դեռ  
քաղաքավարին յաշխարհի և քաղաքավարելոց են, քարոզ  
կենդանի ունին զԴիւցազնական առաքինութիւնս նորին Հան-  
գուցելոյ՝ յաւեժական յիշատակաց ևս արժանիս, որք յօ-  
գուտ Աղգի ընդհանուր՝ գործեցան 'ի նմանէ ամենայն պան-  
ծալի գործողութեամբք 'ի հոգեորս և 'ի մարմնաւորս. և

չքնաղ օրինակ նորա առաքինի վարուցն, և այլ որ ևս գովանի ձրիցն են փառք, մեծ պարծանօք գրաւեալ ունի ըլ սիրտ Յարեթեանս Տոհմի:

“Ա, իրեւ թագ՝ ի գլուխ, աւասիկ Արծան յաւիտենական կայ Լաղարեանդ Բաղմապայծառ Ականաւոր Տոհմի Գերապանծ Ճեմարանդ. որում աշակերտելոցն Հոգեորական Որդեգրացդ դասուց՝ Դուք Անմահապէս Հարք Ամենահոչակ, և նոքա՝ որդիք ձրի բարեմասնեալք. որովք՝ իրեւ Քարողչօք ոմամբք՝ միշտ կենդանի Գերափայլեալ քարողեալ լինիք յաշխարհի յաւիտեան. ուր յայսմիկ առանձին իմն տարազու յանձին բերէք զօրինակ Հօրն Երկնաւորի, որ զաշակերտեալսն յաւիտենական Որդւոյն իւրոյ Միածնի՝ քարողիալաւ աստ յերկրի Անուան Աստուածութեան իւրոյ և Սըրբաղան Խորհրդոյ Մարդեղութեանն Յիսուսի: Ապա սովիմբք բարեպաշտական գործովք մեռեալքն՝ զիարդ համարիցին մեռեալք. քաւ՝ օն անդր:

Ուրեմն Հոգելոյս Հանգուցեալն՝ այժմիկ զի՝ ի հող տապանին խոնարհեալ՝ նինջ առնէ քաղցրիկ յուսով Տիեզերական յարութեան, միայն զի փարեսցի՝ ի տենչ կերպարանակցութեան յարուցելոյն՝ ի մեռելոց Փրկչին Մերոյ Յիսուսի, զի գիտէր՝ թէ յո՛ և յինչ հաւատացեալն էր: Այլ այս՝ որքան և այնպէս, գիտեմք եթէ ելք նորա և տեղի տալ յաշխարհէս՝ վշտալի եղեւ արդարեւ ամենայն Ազգասէր Բարեկիր Սրտի՝ որոց Պայծառ Արեան նորա Ազգակիցն են և բարեկամ և ծանօթ, և նոցա որք Արեգակնախայլ Դիմացն անտեսն են՝ որպէս մեք, այլ բաղմաքանքար շնորհացն նորին առ եկեղեցի և առ Ազգն՝ ծանօթ գերածանօթ:

Իսայց քանդի ոչ ոք՝ ի հողեղինացս այլազգ ինչ սկիզբն կալաւ լինելոյ, մնայ՝ գոհութեամբ խոնարհեցուցանել ըլ գլուխ առաջի Տեառն, զնա ինքն տիպ ունելով՝ որ՝ ի մեք վրկութիւն մինչ ցայս վայր խոնարհեցաւ՝ ի Սուրբ Վայրս: Յաղագս որոյ և մեք՝ ի 6 ապրիլի ամսոյ անցելոյ՝ ի Մեծահանդէս Տօնի Աշխարհամատրան կիւրակէի՝ ի Գերահրաշ Տա-

Ճարին Սրբոյ Յարութեան Համօրէն լրութեամբ Սուրբ Միա-  
բանութեանս Եպիսկոպոսօք և Վարդապետօք և բոլոր ուխ-  
տիւ Սուրբ Եկեղեցւոյ՝ ջերմեռանդն կատարեցաք զՀոգեհան-  
դիստն նորա ’ի ներկայութեան Տէրունական ուխտաւորաց ’ի  
ժամ Փրկական Խորհրդոյ Սուրբ Պատարագին ’ի վերայ Աս-  
տուածընկալ Սուրբ Գերեզմանին՝ յատուկ պաշտօներգու-  
թեամբ և յատինի ծանուցմամբ . զորոյ զՀոգին լուսաւորես-  
ցէ տէր ’ի լոյս Երեսաց Աստուածութեան իւրոյ՝ անմեկնելի՝  
Համօրէն Կախնեօք՝ իւրովք Հոյակապ Տանդ Լաղարեանց . և  
Չերում Պերճապսակ Աղգասէր Մեծանուն Պայաղատութեանդ  
և ամենայն կենցաղակից Գերօրչնեալ Գերդաստանիլ կեանս  
Երկարս անդորրաւէտս շնորհեսցէ Պարագայց ամաց կենդանու-  
թեամբ ’ի ձիգ ժամանակս : Բարեփառ Վեհազնեայ Պայա-  
ղատութեան Չերում Պայժառարե կենացդ բարօրութեան ,  
ամիորձութեան , և ընդարձակութեան

Այնամ ցանկ ջերմեռանդն աղօթարար առ  
Տէր ’ի Սրբաղան Վայրսս , և Դու Պայժառափառ  
Պայաղատ Աեպուչ՝ ողջ լեր անտրտում ’ի կեանս  
Համայն Զարմօք և Պարագայիւք ’ի Տէր Յիսուս  
Քրիստոս :

Սրբոյ Առաքելական Աթոռոյն Երուսաղէմի

Պատրիարք Յօհաննէս Արք Եպիսկոպոս :

յԵրուսաղէմ , 1858 , մայիսի 3 :

յԱթոռ Ա . Յակովէեանց :

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՍՄԱԿԻ

Տ. Խաղենուի Արքապան արժեալիսկողոսի և Աստվածի, Եւառջնորդի վիճակացն Պարսկաստանու և Հնդկաստանու տու-  
նուցին Գաւազանցունիւն, Հայութացյուն Եկեղեցեաց Հայոց  
Եղելոց 'ի Ա. Փենելը Ա. Վաստառ, և Լազարեան  
Շխմուրանի Արևելյան լշկուաց, Աբնեկաղեա Կայսերական  
Դրան, Աւելին Խորհրդական և Աստված, Խաղաղությ ՀՅ-  
Համեմատն Լազարեանց :

## ԶԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ

Եղիշային Բարերար, և Ողոքմանժադոյն Տէր.

Հնորհ արժանայարդ նամակի Ձերդ Գերազանցութեան  
տողեալն 'ի 6 Մարտի՝ գուժարեր վախճանի վեհազն հարա-  
զատին Ձերոյ Աղայ Յովհաննու ժամանեալ առ մեզ 'ի վախ-  
ճան ամսեանն Ապրիլի, Ժախճութեամբ ելից զսիրտ մեր՝  
յաղագս հարուածոցն օրհասի, որով իշխանն պայազատ 'ի  
սուդ Հայաստանի՝ լքեալ զերկրաւոր կեանս՝ փոխեցաւ 'ի  
քուն յաւիտենական։ Համբաւ դառնարկած օրհասի այնմիկ  
խորապէս Ժախճանցեաց 'ի սիրտ մեր զզգացումն Ժախճու-  
թեան, քանզի մեք որ ականատես լինելոյ երկուց բարեշա-  
ռաւիլ Հարազատացդ պատիւ ունեցաք՝ և քաջագէտ եաք  
մեծամեծար բարերարութեանցն Ձերոց յօդուտ Հայաստանի  
և համաղեաց, համակեցաք ըստ ազգային համակրութեան  
'ի վիշտս ծանունս՝ յաղագս մեծ լինելոյ արկածին 'ի տա-  
րաբաղդութիւն համաղեաց։ Սակայն 'ի կշիռ խոկման եղեալ  
զառարկայն՝ գտաք զայն անդառնալի ելք՝ ընդ որ ամենայն  
ազգ մարդկան սկսեալ 'ի կայսերաց ցվերջին աղքատն ու-  
նին ելանել 'ի լրումն անհաս կամաց և անդառնալի վճոյն

Աստուծոյ: Յաղագս որոյ չափաւորեալ զտրտմահաղորդ զգացումն մեր կրից, ըստ պարտաւորութեանն՝ որ թէ քրիստոնէական և թէ ըստ հոգևոր պաշտօնեայ լինելութեան անձին մերոյ՝ վայել էր, կատարեցաք երկիցս զմատուցումն սըրբաշնորհ պատարագի՝ և հանդերձ ամենայն ուխտիւք հոգեւորականաց եղելոց աստանօր զպաշտօնին կատարեցաք հանդէս, մի՛ ՚ի Տաճարի Սրբոյ Ամենափրկչեան վանիս մերոյ, և միւս յեկեղեցւոջ Սուրբ Մինասայ, ուրանօր հանգուցեալ կայ Աղաղար Պապոյ Պապ Աւեհաղինդ, Յուսամք զի մաղթանք աղօթից մերոյ անարժանութեան (որք ոչ առանց բաղում ջերմեռանդութեանց կատարեցան) հաճոյասցին Աստուծոյ, և ըստ բարեմաղթութեացն հայցուածոյ հոգի հանգուցեալ վեհազն հարաղատին Զերոյ՝ դասեսցի յեօթնաստեղեանն խորան՝ ուր ժողովք սրբոցն են ՚ի խաղաղութեան, առ ՚ի կցորդ լինելոյ ընդ արդարոցն՝ շնորհաց Աստուածատեսութեանն, և երանութեանց վայելման, յորս յաւիտենականութիւն է անվախճան. և զի՝ քան զգոհար պատուական կեանք Զեր երկարաձգեսցի ամօք բաղմօք՝ ՚ի պատիւ պարծանաց Լաղարեան օրհնեալ Տան, զի աղգաշնորհ ողորմածութիւնք Զեր միսիթարութիւն շնորհեսցեն աղգային մատաղորեար որդեգրեցելոցն Լաղարեան Տոհմի՝ որք որբացան ՚ի խնամածութենէ հանգուցելոյն ՚ի Տէր:

Ատենաղպիրն Սրբոյ Աանիս ՚ի վերայ գերեզմանի վեհազն Աղաղարու ցեղապետին Զերոյ կարդաց զդամբանական ճառներբողական, զոր ընդ այսմ ՚ի տեսութիւն Զերդ Աւեհաղնութեան մատուցանել ոչ յանպատշաճիցն համարեմք սակի:

Օանձն իմ շնորհապարտ խոստովանիմ յաղագս բարեհաճութեանն՝ զոր ունեցեալ էր Գերաղանցութիւնն Զեր հաղորդել մեղ զգոյժ Հարաղատին Զերոյ, որ ապացոյց էր բարեկամական շնորհացն՝ զոր առ մեղ ունել ոչ էք վարկուցեալ տարադէպ: Վշտակցութիւն մեր առ այն չարաբաստ պատահար եղեւ նովին զգացմամք՝ զոր Առաքեալն. ասէ Ո՞ ՚ի ձէնջ վշտանայ, և ես ոչ վշտանամ. ո՞ ՚ի ձէնջ տապանայ, և ես ոչ տապանամ:

Հոգին սուրբ՝ յորմէ ամենայն շնորհչք իրու յանհատա-  
հոս աղբերէ ծաւալին, սփոփեսցէ զսիրտ Զերդ Ահեղնու-  
թեան և ամենայն ընդ Զեղ վշտացեալ տոհմայնոց, և ըդ  
ցող մխիթարութեան պարգևաց շնորհեսցէ Զեղ և վշտա-  
կցորդ Սիրելեացն Զերոց, զի տրտմութիւնն հոգեմաշ՝ ի բաց  
փարատեսցի յանձնէ և 'ի մտաց Զերոց, և հանգիցէ սիրտն՝  
սփոփանօք հոգեւոր զուարժութեանց և մխիթարութեանց :

Խորին յարդանօք, աղօթանուէր անձնընծայութեամբ և  
չափաւորեալ վշտակցութեամբ հանդերձ, մնամք

Գերազանցեալ Տէր  
Զերդ Ահեղնութեան  
Աղօթարար և խօնարհ Ծառայ .

Պարսկաստանայ և Հնդկաստանի Հայոց  
Եպիսկոպոս Թագուհին :

Համար 251 :

Ի ջուղայ, յԱմենափրկչեան Սուրբ Վանի .

'ի 10 Մայիսի 1858 . և 03կ :



ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԸՆԿԻՒ

Հասարակութեան Հայոց բնակելոց 'ի և օր Քառակաց առ  
շեմքն Գեղագանցութեան, Համաբարձութեանց Հայոց  
Եղելոց 'ի Ա. Փենելը պարհեց Ա. Մատուսա, և Լազարեան  
Շեմարանի Արևելյան լեզուաց, Աւելիանի Այսէրական  
Դրան, և Ելիչն Խորհրդական և Ասղեց, Խաղաղաց Քա-  
զակիմեան Լազարեանց :

ՎԱՐԱՐԱՀՈՒՔ ՓԱՌՕՔ ԳԵՐԱԶԱՆՑԵԱԼ ԱՂԱՅ  
ԽԱՉԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԱԿԵԺԱՂՅՈՒ ՀԱՅՐԵՆԱԿԻԿ ՋԵՐ և ԱՂԱՅԻՆ ՏԵՐ .

ԱԿԵԺԱՂՅՈՒ մայրաքաղաքն Հռովմ՝ 'ի ժամանակի՝ մինչ  
խոհական ծերակուտօքն ունէր զկառավարութիւն իւր, 'ի  
վախճանիլ միոյ 'ի նշանաւոր քաղաքացեաց (որոյ արժանա-  
յիշատակ լինէին մեծագործութիւնք յօգուտ քաղաքին և  
քաղաքացւոցն) քաղաքն ողջոյն ընդ արկած մահուն լինէր  
սգաղկեաց, և տրտմութիւնն 'ի վերայ Հասարակութեանն  
տիրելով՝ սգային զվախճանն իւրեանց Հայրենակցի։ Այնո-  
րինակ վշտակցութիւն Հասարակութեան՝ խրախուսէին զբա-  
ղումն՝ լինել անձնադիր յաղադս պաշտպանութեան՝ քաղա-  
քին պատոյ և քաղաքացեացն օդտից, և վեհանձնութեամբ  
բաղումք զմեծամեծս գործեցին։ Ըստ նմին սարասի վշտակից  
լինել և ողբալ Հասարակութեան մերում՝ զվախճան վեհազն  
Աղայ Յովհաննու հարազատին Զերոյ և մերոյ Հայրենակցի՝  
կարի 'ի գեղ է և յիրաւի. վասն զի թէպէտ ժամանակին  
պարագայք փոխադրեցին զվեհապանծ Տուն Լազարեան աղ-  
գատոհմին 'ի տանէ Հայրենեաց մերոց աստի, այլ շքեղա-  
փայլ փառաւորութիւն անուանն և համբաւոյ նոյն աղգա-

տոհմի՝ որպէս ապարօշ ականապսակ զարդարէ զճակատ ջուղայու, որ Զեր Վեհազնութեան և մեր նուաստ հասարակութեան է Հայրենիք։ Ուստի յետ լսելոյ զգոյժ տխուր վախճանի ՚ի Տէր հանգուցեալ Վեհազն Հարազատին Զերոյ, մեք ամենեքին ՚ի սուդ թխատիպ վարակեցաք ըստ զգացմանցն՝ որ բնական է Հայրենակցութեան, և նովին վշտակցութեամբ հաղորդ լինելով հոգեոր հանդիսակատարութեանցն՝ զոր փառաւորութեամբ կատարեաց Բարձր Սրբազան Արհին թագդէոս ամենապատիւ Առաջնորդն մեր. Հարկ Հայրենակցութեան համարեցաք սովին ամենախոնարհ յայտարարութեամբ առաջի առնել Զերում Գերազանցութեան զմեր ամենեցուն սրտից ցաւակցութիւն յաղագս այնմիկ հարուածոց օրհասի, և միարան ինդրել՝ զի հոգի Վեհապանծ հանգուցելոյն Աղայ Յովհաննու ընդ արդարսն դասակցեալ՝ յաւիտենական երանութեանցն լիցի ժառանգաւոր. և ողորմածն Աստուած զսեպուհ Իշխանդ և զԳերազանցեալ Հայրենակիցդ մեր պահեսցէ բարօրաձիդ կենդանութեամբ ընդ շրջանս ամայ բազմաց, միսիթարելով Սուրբ Հոգւովը և զթախճութիւն Զերում սրտի։

Ըստ որում վայելուչ էին հանդիսակատարութիւնքն՝ զորս կատարեաց ամենապատիւ Առաջնորդն մեր, վասն որոյ ո՛չ աւելորդ ինչ համարեցաք զնկարագրութիւն անցից նոցին ընդ սմին առաքել առ Զեր Գերազանցեալ մեծութիւն, յորմէ ակն ունիմք Վեհազնութեան Զերոյ ստանալ զհոգեոր միսիթարութիւն։

Պատիւ մեծ համարիմք ամենայն վերապատութեամբ գրել զանձինս մեր,

Ողորմած Տէր  
Զերդ Գերազանցութեան  
ամենախոնարհ աղօթարար ծառայք

Դ Հունայ 1858. յ9 Մայիսի:

Եւագ Քահանայ Տ. Յովակիմեան Խոաչ. Տէր Արտերուն:  
Տէր Գառեին Արքապատմանց :

Տեր Եղիշաղը Անդրեասեան :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Մինասայ եկեղեցւոց թաղումիղեցւոց թաղի) :

Տեր Ամենա Տ. Մատթեոսեանց :

Տեր Գևորգ Գևորգար Ա ընանիսեան :

Տեր Միւտյել Տ. Եղիշաղընանց :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Ամենափրկիչ եկեղեցւոյ, Երևան թաղի) :

Տեր Առենինոս Բարաղամեան :

Տեր Միւրտէն Կ. Ամենանեան :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Աւրամէս եկեղեցւոյ, Քոչէր թաղի) :

Տեր Կարապէտ Ա արդանեան :

Տեր Միւրտէն Հ. Տ. Պատիսանեան :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Յովհաննու եկեղեցւոյ, և Ա. Կատարինէ անապատին Կուսանաց, Զարսու թաղի) :

Տեր Հովհաննէս Մարիսանեան :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Ատելիաննոս եկեղեցւոյ, Յակոբյաննեց թաղի) :

Տեր Անդրեաս Հովհաննիսեանց :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Լուսաւորիչ եկեղեցւոյ, Փռքրիկ Մէջդան թաղի, և վիճակաւոր՝ Ա. Գէորգ եկեղեցւոյ Խօջենց թաղի) :

Տեր Բարսեղ Գալուտեան :

Տեր Գևորգ Ա. Բարաղամեանց :

(Ա իմակաւոր քահանայք Ա. Աստուածածնայ և Բեթղեհէմի եկեղեցւոյն Մէծ Մէջտան թաղի) :

Տ. Աղանուրեանց :

Կ. Ա. Զօրաբեանց :

Անն Անհապէտեան :

Անդիւն Հայրապետ Խոսկեանց :

Արքար Արքայէլ:

Յովհաննէս Տէր Պահապետն :

Անդրուս Խարբութեան :

Գևորգ Գրիգորեան :

Արքիաննոս Առաջանձանց :

Անդրէս Տ. Արքիաննուան :

Յովհաննէս Ա. Գառնեան :

Յովհաննէս Եղիշայէտն :

Գառապար Արքայէլուս :

Առքար Գառապարը :

Յարութիւն Բարսէղ Յարութիւննետն :

Կարապէտ Տէր Յովհաննէս Գալուքեան :

Արքիոս Յովհաննէս :

Օտար ..... :

Լազարէն Տէր Գալուքեան :

Առնուս Եղիշայէտն :



### ԱԿԵՐԱԳԻՒՅ

Հայոց հանդիսակառարութեանն եղելոյ 'ի պահարի զանաց  
Եմեագիւնէ, 'ի ևոյ Թագայ, 'ի յեշտակ հանդուցէալ  
ՀՅակիննու ՀՅակիմեան Լաղարէանց :

ա. Ապրիլի 30, նշանակեալն 232. Համարաւ հրամա-  
նագիր բարձր Սրբազն Առաջնորդին ազդ արար Արժանապա-  
տիւ Տէր Մարտիրոս Տէր Յովակիմեան Աւագ Քահանային  
ծանուցանել առ Հասարակ Հոգեորական ուխտին եղելոյ 'ի  
Զուղայ զգործ օրհասին Վեհազն Աղայ Յովհաննու, պա-  
տուիրելով զի 'ի Հետևեալ աւուրն՝ որ էր տօն Համբարձ-  
ման, Ժողովեսցին ամենեքեան 'ի տաճար Սրբոյ Ամենափրկ-  
չեան վանի՝ առ 'ի լինելոյ աղօթակից և հանդիսակից 'ի կա-  
տարման պաշտօնին : 'ի 1 Մայիսի ըստ նշանակեալ հրամա-  
նին Ժողովեցան 'ի Սուրբ Տաճարն Ամենափրկչի՝ ամենայն  
Քահանայք՝ կուսանք. Սարկաւագունք՝ և Հոգեոր ուխտն Զու-  
ղայու : Նորին Սրբազնութիւն արհին Թագդէոս ըստ սովո-  
րական շքեղութեանն մատոյց զիրկարար Պատարագն, 'ի  
Հասանել ց՝ Հայր մեր. « Երգն աղօթի, Նորին Սրբազնու-  
թիւնն դարձեալ առ Ժողովուրդսն՝ որք Համախմբեալ կային  
'ի Տաճար անդր՝ ծանոյց բաղում թախծութեամբ սրտի ըլ-  
դոյժ օրհասին վեհազն Աղայ Յովհաննու, Ներբողեաց զնո-  
ցին անդուգական բարերարութիւնն, զջերմեռանդութիւնն  
սիրոյ առ օդուտն Համազգութեան, զնշանաւոր մեծագործու-  
թիւնն, և զարժանաւորութիւն Լաղարեան Աղջատոհմին.  
յայտնեաց զցաւակցութիւն՝ սրտին իւրոյ, և զհարկն երախ-  
տագիտաբար աղօթելոյ սակս Հոգւոյ Հանգուցեալ Վեհա-  
զինն Յովհաննու : Մինչ Նորին Սրբազնութիւնն զբանս Ներ-  
բողական քարողին իւրոյ ընդմիջեալ էր. Քահանայք կրե-  
լով զշուրջառս եկին յատեան առաջին դասուն՝ և բոլորա-  
կաձե կանգնեցան ըստ իւրաքանչիւր աստիճանի, կուսանք՝  
զկնի նոցա. և Սարկաւագունք Դպրօքն հանդերձ յայոկոյս

և յայնկոյս դասուն կարգաւ շարադասեալ մնային : Տուեալ  
եղե 'ի Վանաց անտի մոմեղէն 'ի ձեռս ամենեցուն . և բա-  
ժանեցաւ Քահանայից՝ Կուսանաց՝ Սարկաւագաց՝ և Դպրաց,  
պաշտօնադրամ ըստ իւրաքանչիւր կարգի : Յետ վերջաւորե-  
լոյ Սրբազնին զբանս քարոզին իւրոյ , սկիզբն եղե ողբա-  
ձայն երգոյ Հանգստեան շարականին . և կատարեցաւ պաշ-  
տօնին կարգ մեծաւ փառաւորութեամբ յաղագս խուռն դա-  
սաւորութեան Հոգեորականացն դասուն : Յետ արձակելոյ  
պատարագին՝ դասք Քահանայից և արժանաւորքն 'ի ժողո-  
վրդականաց Ճաշեցին ընդ Սրբազն Առաջնորդին 'ի վերայ  
սեղանոյ՝ որ վայելչութեամբ պատրաստեալ կայր յառաջ-  
նորդարան անդը :

Բ. Երեք Մայիսի 239. Համարաւ Հրամանագիր Սրբա-  
զն Առաջնորդին դարձեալ աղդ արար Արժանոպատիւ Տէր  
Մարտիրոս Աւագ Հահանային ծանուցանել Հոգեորականացն  
եղելոց 'ի Զուղայ . զի 'ի Հետեւեալ աւուրն կիւրակէի ժողո-  
վեսցին ամենեքին Քահանայք՝ Կուսանք՝ և ամենայն Հոգե-  
ւոր Կղերն 'ի Սուրբ Մինասայ Եկեղեցին Թարվեղեցւոց թա-  
ղի . առ 'ի լինելոյ նոյնպէս աղօթակից և Հանդիսակից պաշ-  
տօնին՝ որ անդը կատարելոց էր 'ի յիշատակ ամենայն ննջե-  
ցելոց Լազարեան Ազգատոհմի , մանաւանդ յաղագս Հոգեոյ  
Վեհազն Աղայ Յովհաննու : 'Ի Կ Մայիսի . Նորին Սրբազ-  
նութիւնն դարձեալ յայնմ Սուրբ Մինասայ Եկեղեցւոջ՝  
մատոյց զիրկարար Պատարագն . ուրանօր և ամենայն Քա-  
հանայք՝ Կուսանք՝ և Հոգեոր պաշտօնեայք ամենայն Եկեղե-  
ցեացն Զուղայու Համախմբեալ կային : Յետ արձակման սրբոյ  
Պատարագին ընթերցեալ եղե նամակն Վեհազն Աղայ Խա-  
չատրոյ Լազարեան գրեալ առ Սրբազն Թաղդէոս Աք Ե-  
պիսկոպոս Առաջնորդն : Քահանայք կրելով զշուրջառ նա-  
խապատրաստ կային Հանդերձ կուսանօք՝ Սարկաւագօք և  
Դպրօքն զլուցեալ մոմեղէնս 'ի ձեռին ունելով , զոր բաժա-  
նեալ էր ամենեցուն՝ վանաց կառավարութիւնն : Յետ զնա-  
մակ Վեհազն Աղայ Խաչատրոյ ընթեռնլոյ 'ի լուր ամենե-

ցուն ակմբելոցն անդանօր, սկիզբն եղև Հանգստեան շարականին, և դասք Դպրացն և Սարկաւագաց զկնի նոցա Քահանայք և Կուսանք. և Սրբազնն ՚ի միջի նոցա զգեստաւորեալ՝ ելին Եկեղեցւոյն Թափօրական իմն ընթա ՚ի Սրբոյ ցիւք, և եկին ՚ի խորան մատրանն նոյն Եկեղեցւոյ՝ ուրանօր կայր դամբարան Ցեղապետին Լազարեանց Ազգատոհմի՝ Հանգուցելոյն Աղաղարու: Այն դամբարան զարդարեալ էր յառաջագոյն փոքրիկ իմն սեղանով՝ յորոյ վերայ արկեալ զսե կերպաս և զշուրցառ, եղեալ կային վառեալ մոմեղէնք՝ և խնկանոյ բուրման: Դասքն Հոգևորականաց Թափօրական ընթացիւքն ելեալ յեկեղեցւոյ՝ եկին առ այն գերեզման, այլ յաղագս անձուկ լինելոյ խորանին՝ ուրանօր մարմին Հանգուցելոյն Աղաղարու կայր ամիսոփեալ, կացին արտաքոյ այնր, և կատարեցին զերդ շարականին. Կորին Սրբազնութիւնն կարդաց զշանգստեան Աւետարանն ՚ի վերայ դամբարանին, և յաւարտիլն դարձեալ յարտաքս այնր, սկիզբն եղև երդոցն Հանգըստեան պաշտաման: Մինչ Հոգևորականք զպաշտօնին կատարէին Հանդէս, բաժանեցաւ պաշտօնադրամն առ ամենեսին ըստ հրամանի Սրբազնին ՚ի կառավարութենէ Վանացն: Յետ կատարելոյ զկարդ պաշտօնին, ընթերցեալ եղև ՚ի վերայ շիրմին Ցեղապետին Աղաղարու Դամբանական ներբողն՝ զոր պատրաստեալ էր Ատենադապիրն Ամենափրկչեան Սրբոյ Վանին: Ժողովրդականք Թախծութեան դիմօք Հաւաքեալ անդր՝ Հայրենակցական զգացմամբ լսելով զայն ճառ, յետ աւարտմանն արձակեցան ամենեքին. իսկ Քահանայք և ոմանք յարժանաւորաց ժողովրդեան ընկերելով Սրբազնին՝ գնացին ՚ի Վանքն, և անդ ճաշեցին ՚ի վերայ սեղանոյ՝ որ ըստ օրինակի առաջնոյն պատրաստեալ կայր ՚ի մէջ Առաջնորդարանին:

Պ. Առաքեցաւ դարձեալ ՚ի և Մայիսի 240, Համարաւ Հրամանագիր Սրբազն Առաջնորդին, ըստ յետագայ օրինակին՝ առ ամենայն Քահանայս Զուղայու:

Սրբակրօն Քահանայից Լուսաւորչական՝ եղելոց ՚ի Զուղայ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ.

Վեհազն Աղայ Խաչատուր Յովակիմեան Լազարեանց  
Մարտի 6, գրութեամբ իւրով պատուելով զմեզ՝ ծանու-  
ցեալ էր զգոյժ վախճանի հարազատին իւրոյ վեհազն Աղայ  
Յովիչաննու : Այն տղդարարութիւնն սորին Վեհազնութեան  
է՝ ի մտաբերելոյ զհայրենիս իւրեանց զջուղայ, վասն որոյ և  
մեք ըստ որում վիճակեալ եմք կամօքն Աստուծոյ անար-  
ժան վիճակաւոր այսմիկ վիճակի, հարկ երախտագիտութեան  
և հայրենակցական մեծարանաց համարեմք զկենդանիս և ըդ  
հանգուցեալսն Վեհապանձ Տոհմին Լազարեանց յիշատակել  
յաղօթս՝ որք կատարին յամենայն Եկեղեցիս Զուղայու, վասն  
որոյ առաջարկեմք ձեզ զի մինչև ցմի ամ ժամանակ ՚ի  
մատուցանելն զշնորհաբաշխ Պատարագ՝ յիշատակեսջիք ըդ  
Հոգիս ննջեցելոցն Լազարեան Տոհմի, մանաւանդ զՀոգի  
Հանգուցեալ Վեհազն Աղայ Յովիչաննու, և սակս կենդա-  
նացն նոյն Վսեմ Աղդատոհմի խնդրեսջիք զերկարութիւն  
կենաց, և զյարատեռմն Սերնդոց աղդատոհմին Լազարեանց:  
՚ի Զուղայ, յԱմենափրկչեան Սուրբ Վանի . ՚ի 4 Մայիսի,  
1858 և ՌՅԷ. համար 240 :

յԽսկականին ստորագրեալ, »Պարսկաստանայ  
և Հնդկաստանի Հայոց Եպիսկոպոս Թաղթէն» :

Արքակրօն Քահանայք ՚ի պատասխանի նոյն Հրամանա-  
դրոյ գրեցին զյանձնառական յայտարարութիւն իւրեանց,  
որոյ իսկական դաղափար ընդ սմին առաքի :

‘Ե Ե Ր Բ Ո Գ ’

‘Ե Վ Ե Խ Ա Պ Ն Ե Ա յ ա յ ա ս ա պ ո ւ հ օ ն Ա լ ա ղ ա ր յ ե տ ն յ , և 'ի ա խ ո ւ ր յ ա կ ա ս ա կ վ ե հ ա ս ա լ ո ւ չ ո վ ե հ ա ն ն ո ւ չ ո վ ա կ ի մ ե տ ն Ա լ ա ղ ա ր յ ե տ ն յ , ա ս ա ս ս ց ե տ լ 'ի վ ե լ ո յ գ ե լ ո ւ ն ի ի շ խ ա ն ա պ ե տ ո յ ի Ա ղ ա ղ ա ր յ Պ ա տ ո յ գ Պ ա ղ ա յ յ Ա ղ ա յ չ ո վ ե հ ա ն ն ո ւ , ո ր հ ա ն գ ո ւ ց ե տ լ ի ա յ 'ի Պ ա ղ ա յ , 'ի խ ո ր ա ն ի մ ա ր յ ա ն Ա ս տ ր է Ա խ ն ա ս ա յ Ե կ ե ղ ե ց ո յ ի , 'ի 4  
Մ ա յ ի ո յ է 1858 տ մ ի :

Հ ո դ ե ռ ո ր հ ա ն դ ի ս ա ղ ր ո ւ թ ի ւ ն պ ա շ տ ա մ ա ն և ձ ա յ ն ե ր դ ո յ օ ր հ ն ո ւ թ ե ա ն ս ա յ ս մ ի կ զ ո ր 'ի վ ե ր ա յ Չ ե ր ո ւ մ դ ա մ բ ա ր ա ն ի կ ա տ ա ր ե ց ա ք՝ Ի շ խ ա ն ա պ ե տ դ Ա ղ ա ղ ա ր , մ ի զ ա ր մ ա ց ո ւ մ ի ի ն չ ա ծ ց ե ն հ ո ղ ա ց ե ա լ մ ա ր մ ն ո յ դ և ք ա յ ք ա յ ե ա լ Ո ս կ ե ր ո տ ե ա ց դ՝ ո ր ք յ ա յ ս շ ի ր ի մ հ ա ն գ ո ւ ց ե ա լ գ տ ա ն ի ն : Թ է պ է տ ի մ ա ն ա լ ի լ ս ե լ ի ք հ ո դ ւ ո յ դ շ ո տ ո ւ ց ե ա լ 'ի զ ա ր մ ա ն ս ո ւ ն ի ն հ ա մ ա կ ի լ , թ է զ ե ն չ ա յ ս ձ ա յ ն ի ց է՝ ո ր 'ի հ ա ր ի ւ ր յ ի ս ո ւ ն ա մ ա ց հ ե տ է ո չ և ս ն ե ր դ ա շ ն ա կ ե ա լ լ ի ն է ր լ ս ե լ ի շ ո ւ ր ջ զ բ ո յ ի ն գ ե ր ե ղ մ ա ն ա ւ . ա յ լ մ ի թ է ս ո ւ տ ի ց է լ ա ն ի մ ա ս տ ն ո յ ն Ս ո ղ ո վ մ ո ն ի թ է »'ի վ ա խ մ ա ն ե լ ա ռ ն ա ր դ ա ր ո յ՝ ո չ կ ո ր ն չ ի յ ո յ ս : Թ է պ է տ վ ա խ մ ա ն ե ց ա ր՝ թ է պ է տ 'ի հ ո ղ ա ս տ ա ւ ա ն դ ե ց ա ր՝ թ է պ է տ դ ա ր ք ա ն ց ի ն 'ի վ ե ր ա յ և ո չ ո ք ծ ա ն ե ա ւ զ բ ե ղ զ ա մ ի ո փ ի ե ա լ դ ա ս տ ա ն օ ր , և վ ե հ ա ն ձ ն հ ո ղ ա ց ե ա լ մ ա ր մ ն ո յ դ ք ո պ ա հ ա ր ա ն ի ր ե լ ն դ ա ն ն շ ա ն ս դ ա ս ե ց ա ւ , ա յ լ մ ի թ է կ ո ր ե ա ւ յ ո յ մ ն՝ թ է Ա ս տ ո ւ ա ծ ա հ ա ճ ո յ ը ա ր ե դ ո ր ծ ո ւ թ ի ւ ն ք Չ ե ր ա ն մ ա չ ա ր ձ ա ն կ ա ն դ ա ղ ե ց ա ն , յ ո ր ո ւ մ՝ ն ա և 'ի ր ա ր ե շ ա ռ ա ւ ի լ ս ե ր ե ա լ ս ն 'ի ք է ն՝ կ ե ն դ ա ն ի ե կ ա ց ա ն ո ւ ն մ է ծ ա գ ո ր ծ ի շ խ ա ն ա պ ե տ ի դ : Ա չ ա զ զ ո ր մ է ք ս կ ա տ ա ր ե ց ա ք ա յ ս օ ր թ ա փ ի օ ր ա հ ա ն դ է ս ա յ ս օ ր հ ն ո ւ թ ի ւ ն պ ա շ տ ա մ ա ն՝ ա կ ն ե ր ե լ ա պ ա ց ո յ ց ա ն կ ո ր ն չ ե լ ի լ ի ն ե լ ո յ յ ո ւ ս ո յ ն : Ս թ ա փ ի ե ա ց ո ւ ր ե մ ն 'ի զ ա ր մ ա ց մ ա ն է յ ո ր ս ե ր կ ե ա ն ա ն ա կ ն կ ա լ տ է պ ք ը լ ն կ լ մ ե ց ի ն զ բ ե ղ , և լ ո ւ ր զ ի ն չ Ս ո ղ ո վ մ ո ն ա ս է »օ ր հ ն ո ւ թ ի ւ ն ս Տ ե ա ռ ն 'ի գ լ ո ւ ի ս ա ր դ ա ր ո ց . յ ի շ ա տ ա կ ա ր դ ա ր ո ց գ ո վ ո ւ թ ե ա մ ի : Ա ր դ ա ր ե լ Ա ս տ ո ւ ծ ո յ է գ ի տ ե լ զ գ ո ր ծ ս ի ւ ր ա ք ա ն չ ի ւ ր ո ւ մ է ք , ա յ լ ո ր պ է ս խ օ ս ք ը ե ր ա ն ո յ՝ յ ա ւ ե լ ո ւ ա

ծոց սրտին են թարքման՝ նոյնպէս և անցնիւր մերկապարանոց դործք՝ իրրե հայելի ցուցանեն զհոգւոյն արդարութեան և մեղաց դործոց կերպարան։ Չեր Աստուածահաճոյ բարեգործութեանցն՝ անաղամող վկայք ահաւանիկ յիշատակիքն հանդիսանան, որք թէ առ ստորոտով դմբեթի սոյն այս Եկեղեցւոյ՝ և թէ 'ի հին արձանագրութիւնս սորին՝ և Անապատին կուսանաց Գրեալ կան, յորս ակներե փայլին ներքին ջերմեռանդութիւնք հոգւոյ Չերոյ. զի Չերով արդեամբ զԱնապատն կուսանաց ողջոյն ներքին և արտաքին շինութեամբքն կառուցիք, զդմբեթն սոյն այս Եկեղեցւոյ շինեցիք, և Ճոխացուցիք զաւանդատուն հայրենիդ այսմիկ Եկեղեցւոյ բաղմադեմի յիշատակատուութեամբ, զորոց որոշակի յիշատակութիւն 'ի հին արձանագրութեան սորին կան նշանակեալ, թէպէտ դրեալ սևակաւ՝ այլ ոսկեգիր քանդակեալ կան նորին 'ի լուսեղէնն Տաճարի, և պարգևք արժանահատոյց առատաշնորհ չափով չափին 'ի վարձատրողէն բարեաց :

Խնդա՛ և զուարձացիր հոգւովդ, զի 'ի բարերոյս արմատոյ Քոյին շառաւիղեալ ծնունդք՝ կոխեցին զհետս շաւղացն աղգասիրութեան նախահաւուդ իւրեանց, և յայնմ ասպարիզի այնքան վսեմ հանդիսացան՝ մինչև ընդ տիեզերս ոչ միայն զանուն աղգատոհմի Աղաղարեան կամ Լաղարեան՝ պայծառ որպէս ղարե կացուցին, այլ և յաւելին զշուք և զպատիւ հայկեան և Արամեան սերնդոց, գերազանցեալ մեծագործութեամբք՝ որոց համբաւ ընդ ամենայն ուրեք տարածեցաւ : Ըստ սաղմոսերգողին Դաւթի՛ որպէս այդի փոխադրեցան Որդիք քո 'ի տանէ հայրենեաց, 'ի ժամանակի՛ մինչ ըստ եղիպտական տանջանացն՝ հոսանք բռնակալութեանց Փարաւոնակերպ արքային Նաղիրշահի՛ որպէս կատաղի և լեռնակուտակ ալիք տանջեալ էին զջուղայ : Օրհնութիւնն Աստուծոյ ըստ Առղովմոնեան բանի՝ անսպառ 'ի յարկս արդարոց հովանի եղեւ նոցա՝ որպէս երբեմն ամպովն հովանացեալ 'ի վերայ բանակին Կարայէլի յեղիպտոսէ չուեցելոյ՝ առաջնոր-

դէր նոցա ընդ անկոխ անապատ : Սահմանն Ռուսաստանի որպէս երկիր աւետեաց ընկալաւ զդաղթական Որդիս Քո 'ի ծոց իւր , որոյ 'ի հող արգաւանդ ոռոգեալ առատաշնորհ ողորմութեամբ Աստուծոյ՝ և պարարտացեալ տաճմամբ խնամոց Աստուածապսակ Ինքնանձ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆՆ ՌՈՒՍԱՑ՝ Հաստատեցին զարմատս իւրեանց , արձակեցին զբարութեանն մեծահամբաւութեան ըստ ունակական ձրիցն և կարողութեանն իւրեանց՝ բարգաւաճեալ զօրացան՝ ընդարձակեցան՝ և ձգեցին զշառաւիղս իւրեաց 'ի գետոյ մինչև ցծով , այն է՝ ըզ գործս վեհանձնական գերազանցեալ մեծագործութեանցն ձգեցին յաղգէ իւրեանց ցոտար աղգս : 'Ի հեռաւոր կղղիս և 'ի սահմանս ուրանօթ էր անուն Հայ աղգութեան՝ շառաւիղ արձակեաց պայծառութիւն անուանն և համբաւոյ Լազարեան աղգատոհմի՝ և յաւել զշուք և զյարդ համազգութեանն մերում : Եթէ պարծեսցի Հայաստան իւրով արդի ուսումնական լուսաւորութեամբն , զնոյն պարծանու անձին քում վերագրեա Իշխանապետդ Աղաղար , վասն զի բուրաստանն Լուսաւորութեան 'ի մայրաքաղաքն Մոսկուա տընկեցաւ և հաստատեցաւ 'ի Քոյին շառաւիղեալ ծննդոց , յորմէ լոյս գիտութեան դեղեալ ծաւալեցաւ 'ի Հայաստան 'ի նախահայրենին մեր տուն : Ընդ Քեզ և զԼազարեան աղգատոհմ կարի յիրաւունս կոչել արժան է՝ աղգային բարերար՝ Հայաստանի գիտութեան լուսատու և ծրագ պարծանաց Հայ անուան լուսապայծառ փողփողեալ : Եթէ 'ի բարօրութեան բարգաւաճի գաղթականութիւնն Հայոց որ թէ 'ի Նոր Նախիջեան և թէ յայլ տեղիս Հայաստանի , որք իրբե 'ի գիրկս գորովազեղուն Մօր Հանգչին , առ Քեզ և առ Լազարեան աղգատոհմ լիցին երախտապատ և զանձանց իւրեանց աղատութիւն Զեր՝ և բարեճնունդ սերելոցն Քոց վերագրեսցեն աղգասիրութեան շնորհ : Զեր ասեմ՝ յաղագս բարեբոյս արմատ գոլոյ նոյն աղգատոհմի , և Լազարեանց ասեմ՝ սակս նոքօք կատարելագործելոյ նոյն աղգասէր գործողութեանց : Պարծիր ուրիմն նշխարեալդ մարմին , և պանծա քայքայեալդ

Ասկերք, որք ՚ի ներքոյ այսմ՝ Հողապատեան շիրմի ամիսոսիեալ պահիք, վասն զի անիւ ժամանակի ընդ մի և կէս զարուց շրջան Հոլովեալ, ոչ միայն որպէս կենդանի յիշատակեցաւ քո անուն, այլ և օրչնութեամբն Աստուծոյ ՚ի սերեալսն ՚ի քէն՝ որպէս արիի լուսացնցուղ պայծառանալով պայծառանայ։ Այո՛ պարծիր որպէս վսեմաշաւիլ սերնդոց արմատ, այլ զամենայն պատիւ պարծանաց Աստուծոյ վարկանիցես շնորհ։ վասն զի նա է՝ որով մեծամեծք մեծանան, նովաւ օրչնին յարկք արդարոց, և տունք նոցա զօրութեամբ բազմաւ՝ որպէս Սողովմոն ասէ՝ Աստուծով մնան կանդաղուն։

Եւ արդ դու Հայրենիդ մեր ջուղայ՝ ծնող և սնուցանող վեհանձնական և նշանաւոր ծննդոց, մի յարդի անշըքացեալ վիճակ քո նայելով դտարաբաղդութիւն քո ողբացես, այլ հայեաց ՚ի բաղում մասունս երկրի և տես թէ սերեալքն ՚ի ծոցոյ քումմէ շառաւիղք՝ զիարդ ընդ ամենայն ուրեք հսկայաքայլ առաջադիմութեամբ ծաղկին և հասունանան, և յամենուրեք գրաւեն անձանց զպատոյ և զպարծանացն առաջին մրցանակ յաղթանակութեան, զորոց յայսմ ներբողինի ոչ կամիմ խառնել զճառ։ այլ գերազանց քան զամենեսին քեզ պարծանաց պսակ և շուք բարեփառ պայծառ փողփողի անուն Լազարեան աղգատոհմին՝ անզուգական բարերարացն Հայաստանի։ Նոքօք Հայաստան պարծանաց ՚ի պարծանս վերձեմի, այլ ըստ ուղիղ դատողութեան, նոյն ամենայն պարծանք որպէս մարգարտահիւս թադ և ականակապ պսակ ՚ի գլուխ քո բոլորին։

Քա՞նի դառն է ընդ օշարակին բաժակի խառնել զլեզի, և ընդ այս ներբողենի՝ կցորդել զգուժարկու բօթ վախճանի Վեհազն Աղայ Յովհաննու Յովակիմեան Լազարեան, որ ՚ի 6 Փետրվարի զանցաւորն փոխեաց ընդ յաւիտենականին կենաց։ Ողբայ հայաստան զգերաշխարելի մահ վեհազն այնմիկ, Ողբայ և զմահ պանծալոյն ՚ի փառս Բէհրուդովին Յովսեփայ (որոյ Արեսական գոչիւն և առաջնորդական հանձար յասպարեզ զինու՝ սասանեցոյց զբանակ Օս-

մանեան, և զղօրս նոցա որպէս զարագոտն եղինս խուճապ  
՚ի փախուստ վարատական ցրուեաց) զմահ՝ որ զըկեաց զշա-  
յաստան յերկուց ականց պատուականաց՝ գերազանցեալ քան  
զմարդարիտն Աղէոպատրայ ՚ի սէր Անտոնինոսին կորուսեալ։  
Ողբա՛ և դու ջուղայ զլախճան նոցա, զի երկոցուն իսկ դու  
ես հայրենի նախածնող։ Սակայն ընդ մահուան նոցա մի թէ  
կորեաւ և յիշատակ նոցին, ոյր վասն զաղետալին արտա-  
սուաց հարկանել զլար ողբերդական արժան իցէ։ Քա՛ մի  
լիցի։ Զի թէ Աղաղար Պապոյ Պապ միոյն վախճանեալն ՚ի  
157 ամաց չետէ՛ այսօր ներբողինիւ զյիշատակութիւն ըն-  
կալաւ, ոչ ապաքէն և Վեհազն Յովհաննէս ըստ նախա-  
հաւուն իւրոյ կենդանի մնալոց է ՚ի յիշատակս բարեգոր-  
ծութեանն իւրոյ։ Այո՛ ել նա յաշխարհէ առանց զկնի իւր  
թողլոյ յերանացն իւրոց ժառանգ երկրաւոր, այլ Հոգի ա-  
ռաւել է քան զմարմին, և Հոգեոր ժառանգաց նորա թիւ՝  
են հարիւրաւորք, որք Որդեգրեալք Ճեմարանին Լաղա-  
րեանց՝ առ շնորհս նորին հիմնադրողաց և խնամածուաց՝  
ընդ որս և Աղայ Յովհաննու Յովհակիմեան մշտապարտ ժա-  
ռանգք են զերախտազիտութիւն խոստովանելոյ։ Նոցա իւրա-  
քանչիւրոց սիրտ փոխանակ քարեղէն և անշունչ արձանի՝  
կենդանի և խօսուն արձանք են՝ նորին հանրահոչակ բարե-  
րարութեանցն յիշատակի։ Կենդանի է և անուն նորա ՚ի  
փառս գերազանցեալ ազգատոհմի իւրում, յորում այսօր  
պայծառ փայլի հարազատն նորա՝ վկայեալն ըստ բազմահան-  
ճար լուսաւորութեան մտաց Վեհազն Աղայ Խաչատուր։ Սա  
ցորքան զկենսականն շնչէ զօդ, ՚ի մրմուջս հեծութեան ան-  
մոռաց մտարերէ զհամշիրակն իւր հանգուցեալ, և ոչ այն-  
չափ ճիշդ նկարագրէ ճարտար նկարող՝ զկերպարանացն տիպ  
հանդուցելոյն, որչափ սորին գորովալի զգացումն եղբայրա-  
կան կրից՝ զնորին տիպ կերպարանի՝ յերեակայութեանն իւ-  
րում նկարագրէ անվրէպ։ Թէպէտ գնաց Յովհաննէս՝ այլ  
կայ Խաչատուր, նա՛ որ ըստ Խոհական հանձարոյն իւրոյ  
սիւն հաստատութեան է այսօր վեհապանծ Տանն Լաղա-

թեանց։ Յաւերժայիշատակ են սխրագործութիւնքն վեհազն խաչատրոյ, որոյ վկայք են Ռուսաստան և Հայաստան, ուստի յաւերժական է և յիշատակ վեհազն Յովհաննու, յաղադս ընդ Հարազատին իւրոյ յամենայն մեծագործութիւնս լինելոյ գործակից։ Ուրեմն աղետալի ողբերգութիւնն ՚ի բաց մերժեսցի, զի մահ՝ որ անմահ պահէ յետ վախճանի կենաց՝ ղանուն և զյիշատակ ուրուք, ոչ է մահ, այլ քուն նախասահմանեալ յԱստուծոյ սակս ամենեցուն, որով նորոգիցին յարութեամբ ՚ի կեանս անմահութեան։ Ուստի խոնարհեսցուք ամենիշխան կամաց Աստուծոյ, Հնազանդ լիցուք տնօրէնութեանն որ ՚ի նմանէ առաջնորդի, և ընդ ցողս ջերմեռանդութեան արտասուաց հաղորդեսցուք զմաղթանս հայցուածոց առ Աստուած, զի դասեսցէ զհողի վեհազն հանգուցելոյն Աղայ Յովհաննու ՚ի յարկս արդարոց, և յարատե յաջորդութեամբ յազդէ յազդ կենդանի և անսասան պահեսցէ զՏուն՝ ղանուն՝ և զսերունդս Լաղարեանց ազգատոհմի, ՚ի փառս և ՚ի պատիւ Հայկեան շառաւիղաց, յաւետ ևս Զուղայեցւոց։

Յաքունիան թ., Տէր Յովհանեանց։

Ատենադպիր Սրբոյ Ամենափրկչեան  
վանի Նոր Զուղայու։

### ԹԵՐԳԱՄԵՆԱՌԹԻՒՆ

Պարզեական Հրավարատիկ Կայսեր Առաւաց՝ ‘Եկեղայունի  
Ե. որով պատմած Տ. ՀՅովեաննու ՀՅովեակիմեան Լազարէանց  
Հանշանն Եսովէպական Կայչէ Ա. Անանիալաւաց առ  
առջոիննի:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՑ

ՄԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԱԾԳՒՆ,  
ԿԱՅՄ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ԹՈՒՍԱՑ,  
ԱՐՔԱՅ ԼԵՀԱՅ,  
և այլոց, և այլոց, և այլոց:

ՎԵՆԵԼապետի Դրան Մերոյ՝ Ներգործական Պետական  
Խորհրդականի՝ (Յովհաննու) Լազարեանց:

՚Ի տրիտուր յարատել զերմեռանդութեան Զեր յօդուտ  
Լազարեան Ճեմարանին Արևելեան լեզուաց եղելոյ ՚ի Մո-  
կուա՝ զորոյ կրէք Դուք զՀոդաբարձուի կոչումն, Ամենողոր-  
մածաբար պարզեեմք Զել՝ Համաձայն առաջադրութեան Կա-  
ռավարութեան և արժանաւոր Համարելոյն Ժողովայն Նախա-  
րարաց՝ զկայսերական և զԱրքայական Շքանշանն Մեր Աս-  
պետական Կարդի Ա. Սթանիսլաւայ առաջին աստիճանի. զո-  
րոյ զնշանսն ընդ սմին առաքելով՝ Հրամայեմք Զել կրել  
դայն ըստ սահմանադրութեան:

Մասնաւով բարեյօժար առ Զել Մերով Կայսերական և  
Արքայական ողորմութեամբ:

՚Ի Պարզեագրին սեպհական ճեռամք Նո-  
րին Կայսերական Մեծութեան գրեալ է  
ՆԻԿՈՂԱՅՈՍ:

Ա աւերացոյց ստորագրութեամբ Գլխաւոր Տեսուչ Կայ-  
սերական և Արքայական Շքանշանաց Թուսաց՝

Քնեազ Ալեքսանդր Գուլիցին:

Ի Ա. Փեթերպուրկ,

՚ի 11 Ապրիլ 1841 ամի:

Համար 44:

## ԹԱՐԳՄԱՆԻԹՈՒՅՆ

Պարքեական Հըմաղպատիկ Կայսեր Առաջաց՝ Նիկողայոս  
Ե. որով առաջ Տ. Յովհաննու Յովհակին Եազարչանց  
Շահնշան Աստեղական Կայքի Ա. Ենացէ առաջինանի :

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ

**ՄԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԱԶԵՐԻՆ,**

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ :

և այլոց, և այլոց, և այլոց :

ՄԵՐՈՒՄ ՆԵՐԳՈՐծական ՊԵՏՈՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ՝ ՅՈՎ-  
ՀԱՆՆՈւ Լազարեանց :

՚Ի յայտնութիւն Մերս առանձին բարեհաճութեան առ  
Չեղ վասն ջերմեռանդութեանն՝ զոր ցուցիք Դուք ՚ի պահ-  
պանութիւն Լազարեան Ճեմարանի Արեելեան լեզուաց, և  
յաղագս մեծամեծ նուիրանացն՝ զորս առատաձեռնեալ էք  
յօդուտ նորին, համաձայն միջնորդութեան Գլխաւոր Իշխա-  
նապետին յիշատակեալ Ճեմարանի՝ Օժանդակ Զօրապետին  
Կոմսին Օռլովայ, և ըստ արժանագատ վարկածի Ժողովոյն  
Նախարարաց, պարգևեմք Չեղ զՇքանշան Ասպետական Կար-  
գի Ա. Աննայի առաջին աստիճանի. զորոյ զնշանսն առա-  
քեալսն ընդ սմին՝ Հրամայեմք Չեղ կրել ըստ սահմանադ-  
րութեանն :

՚Ի բնագրին Կւրոյին ձեռամբ Նորին Կայ-  
սերական Մեծութեան գրեալ է

**ՆԻԿՈՂԱՅՈՍ :**

Ա աւերացոյց ստորագրութեամբ Գլխաւոր Տեսուչ Աս-  
պետական կարգաց՝

Քնեաղ Ա. Ալեքսանդր :

Ի Ա. Փեթերպուրի .

Ի. 15 Յունիսի 1848 ամի :

Համար 151 :

## ԹԱՐԳԱՎՈՐԻՑԻՒՄ

Պարքեական Հրավարակի Կայսեր Ուսուաց՝ ‘Եկեղացուով  
Ա. որով պատաստ Տ. Յովհաննու Յովհակիման Լազարէանց  
Շահնշանի Սովետական Կարգի Ա. Աննայի և աստիճանի  
զարդարեալ Կայսերական թագիւ:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ

ՄԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵԱԸՆԴԻՒ,

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՈՒԽՍԱՑ,

և այլոց, և այլոց, և այլոց:

Հոգաբարձուի Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց,  
Մերում Ներգործական Պետական Խորհրդականի՝ ունողի ըղ-  
կոչումն Սենեկապետի, (Յովհաննու) Լազարեանց:

Յարատե ջերմեռանդութիւն Զեր առ պայծառութիւն  
Ճեմարանին Արևելեան լեզուաց՝ կառուցելոյ ՚ի Մոսկուա ՚ի  
Տոչմէն Լազարեանց, և բազմապատիկ նուիրաբերութիւնքն  
առատաձեռնեալք ՚ի Զէնջ յօգուտ այսր Ճեմարանի, արժա-  
նի եղեն հանապաղ Մերում առանձին ուշադրութեան: Յար-  
դելով մեր զայդչափ զգովանի և զբարեփոյթ ճիգն Զեր ՚ի  
տարածումն լուսաւորութեան, առ յայտնելոյ զՄեր առ Զեղ  
զառանձին բարեհաճութիւն՝ Ամենողորմածաբար պարզեեմք  
Զեղ զյղեալն ընդ այսմ զՇքանշան Ասպետական կարդի  
Ա. Աննայի առաջին աստիճանի՝ զարդարեալ Կայսերական  
թագիւ, մնալով Մերով Կայսերական ողորմութեամբ բարե-  
հաճ առ Զեղ:

՚Ի բնագրին՝ Իւրական ձեռամբ Նորին  
Կայսերական Մեծութեան գրեալ է

ՆԻԿՈՂԱՅՈՍ:

‘Ալխարար Կայսերական Դրան՝

Կոմա Առլեքպերի:

Ցարսքոյե Սելո.

՚ի 20 Մայիսի 1853 ամի.

Համար 372:

ԹԱՐԳԱՄԱՆԱՏԹԵՐԻ,

Պարզեւական Հյովարարութիւն Երժային Պարսից Աւարեա -  
Դին - Շահի . Այսպէս պատմութեան Տ . ՀՅՈՎԱԿԱՆՆՈՒ ՀՅՈՎԱԿԻ ԸՆԴ  
ԼԱՊԱՐԵԱՆՈՒ ՇԱԽՆԱԴԱՆՆ ԵՐԵՄԵԺՈՒ և ԵՐԵԴԱԿԱՆ առ  
աջնանի (\*):

Որովհետեւ Երկոքին ՏԵՐՈՒԹԻՒՆՔ՝ Պարսիցն և Ռուսաց՝  
դժանին ՚ի Բարեկամական յարակցութեան, յայն սակս և  
Մեք պարտաւորութիւն համարիմք՝ զիւրաքանչիւր ոք՝ որ  
սպաս ծառայութեան մատուցանիցէ, և կենցաղօգտակարագոյն  
գործովք Երևելի զանձն հանդիսացուսցէ, չզրկել և ՚ի Մե-  
րոց ողորմութեանց :

Եղդ եղել Մեղ, թէ արժանաւորագոյնն պատուոյ՝ պեր-  
ճախառն՝ վեհանձնն Յովհաննէս Յովհակիմեան Լազարեանց,  
ընդարձակեալ և առաւել յոյժ պայծառացուցեալ է զԱրեւ-  
եան լեզուաց Ճեմարանն ՚ի Մոսկուա քաղաքի՝ զհիմնեալն  
՚ի Հօրեղբօրէ նորա և ՚ի Հօրէ նորա և զհաստատեալն ՚ի Կո-  
րին Վսեմութենէ, յորում աւանդին մանկանց՝ բայց յայ-  
լոց գիտութեանց՝ նա և օտար լեզուք, Արաբացւոց՝ Պարսից  
և Տաճկաց . որով և Հրահանդեալ պատրաստին թարգմանք  
ընտիրք և միանդամայն պետանացուք Պարսկաստանի, որպի-  
սի եղեն որդին և եղբօրորդին գերաստիճան Խսմայիլ (Ստե-  
փան) Խանի, որք վարժեցան ՚ի նմին շահաբեր Ճեմարանի :

՚ի տրիտուր այսպունակ վաստակոց և արդեանց Զերոց,  
Մեք՝ ըստ Մերում Արքայական ողորմութեան՝ պարտ հա-

(\*) Հրովարտակս այս նախ ՚ի Պարսկական լեզուէ թարգմանեցաւ ՚ի Ռուս  
՚ի Կաւկասեան Սթուտենթէ ՚ի Թարիքկովայ ՚ի Փեթերպուրկ . և ապա  
՚ի թարգմանութենէ անտի փոխեցաւ ՚ի Հայ :

մարիմք պարզեցել զեղ զՇքանշանն Առիւծու և Արեգական  
առաջին աստիճանի, և առաջադրեմք կրել ըստ սահմանեալ  
կարգի։ Ընդ նմին ցանկամք՝ զի Դուք դուցջիք (յայսմշե-  
տէ) զայլ ևս օդտաւէտ ծառայութիւնս։

Հրամայեմք՝ զի Հրովարտակս արձանագրեսցի ՚ի մատե-  
նի թագաւորական Հրովարտակաց։

Համնեանն Զամադի - օլ - ավվալ 1269 ամի (\*)։

---

(\*) ՈՐ Համեմատի փրկչական թուականիս 1853։

## ԹԱՐԳՎԻՎԵԱԼԻԹ-ԴՐԱ

Յայտարար՝ Կամակի Ասման Օռլովայ. որով ժանուարին  
նա Տ. Յովհաննու Յովակիմի լազարեանց, ու հաճէալ  
է Կայսրն Առյլ առլ նմա իշել զ՛ւանշանն Առեծու և  
Երեխական ղղարդնեալն 'ի Համեն Պարսկա:

ԳԼԽԱՏՈՐ ԻՇԽԱՆԱՊԵՏ

ՈՂՈՔ ՏԱՌ ՏԵՐ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ՅԱ ՎՀԱՆՆԵՆ ՅԱ ՎԱՀԻ ՁԵԱՆ ,

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ :

—  
Խագաւոր Կայսրն, ըստ յայտարա-  
ր Կաթչինո. ըութեանն հասուցելոյ առ Կորին Մե-  
ջ Հոկտեմբերի 1854 ամի. ծութիւնն՝ յաղագս պարզեցելոյ Շա-  
հին Պարսկաց Չերում Գերազանցու-  
թեան զ՛ւանշան Առիւծու և Արե-  
գական առաջին աստիճանի, Բարձրա-  
գոյնս բարեհաճացաւ՝ զի Դուք ըն-  
կալջեք զայն և կրեսջեք :

Օ այսպիսի Կայսերական բարեհա-  
ճութիւն՝ զհաղորդեալն ինձ 'ի Տ. Կա-  
խագահէ Կաւկասեան Ժողովոյն՝ ծա-  
նուցանելով Չեղ, ողորմած ՏԵՐ ,  
ինդրեմ ամենախոնարհաբար 'ի Չեղ-  
մէ Գերազանցութենէ՝ վստահ յիմն  
լինել 'ի կատարեալ պատիւ և 'ի հա-  
ւատարմութիւն :

Ստորագրեալ է Կամա Օռլով :



## ԹԱՐԳՎԵՐՆԱԽՈՒԹԻՒՆ

Պարզեւածին ՀՅՈՎԱՐԴԱԿԻ ԿԱյսեր ՌԱԴԱԿԱԿ՝ Աղետանդըն  
Բ. ոքով գուտա Տ. ՅԱՅԻՆՆՈՒ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱՊԱՐԵԱՆԿ  
Շ. ԺԱՆՂԱՆՆ ՋԵՇ ՅԱԿԵ ՍԱՊԵՊԱԿԻՆ ԿԱՐԴԵ ՇՐԱՏԵԼԱ-  
ՊԱՊԻ-ԷՇԻԱՆԲԻՆ՝ ԱՐՔՈՅՆ ՎԱԼԱՊԻՄԵՐԱՅ Է առաջինանի:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ

**ՄԵՐ ԵԳԵՐԱՎԵԴՐ ԵՐԿՐՈՐԴ,**

ԿԱՅՄՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ԹՈՒՍԱՑ:

և այլոց, և այլոց, և այլոց:

Հոգաբարձուի Լաղարեան Ճեմարանի Արեելեան լեզուաց,  
Մերում Ներգործական Պետական Խորհրդականի՝ ունողի  
զկոչումն Սենեկապետի Դրան Մերոյ, Յովհաննու Լաղարեանց:

Դարձուցանելով զուշադրութիւն Մեր 'ի վերայ անխոնջ  
վաստակոց և ջանից Չերոց 'ի կառավարութեան Ճեմարանի  
արեելեան լեզուաց՝ կառուցելոյ 'ի Մոսկուա 'ի տոհմէն Լա-  
ղարեանց, և 'ի վերայ բաղմապատիկ մեծամեծ նուիրաբերու-  
թեանցն եղելոց 'ի ձենջ 'ի սակս հաստատուն պահպանու-  
թեան այսր շինուածոյ՝ օգտակարագունի յամենայն կողմանէ,  
Մեր՝ առ յայտնելոյ զՄեր առ Չեղ զառանձին բարեհաճու-  
թիւն վասն այսպիսի ջերմեռանդութեան յօգուտ լուսաւո-  
րութեան, Ամենողորմածաբար պարգևեմք ձեղ զԱսպետական  
նշանն զմեծի խաչի Առաքելապատիւ իշխանին՝ Սրբոյն Վա-  
տիմիրայ երկրորդ աստիճանի, զորոյ և զնշանսն առաքեալս  
ընդ սմին, հրամայեմք ձեղ կրել ըստ սահմանադրեալն կանոնի:

Վնամք բարեհաճ առ Չեղ Մերով Կայսերական բարե-  
յօժարութեամբ :

'Ի բնագրին Խւրական ձեռամք Նորին Կայ-  
սերական Մեծութեան գրեալ է

ԱՆԵՔՍԱՆԴՐ :

Վաւերացոյց գլխաւոր Տեսուչ Ասպետական կարգաց

Կայ Առլեռպերէ :

Համար 42 :

Ի Ս. Փեթերապուրկ. 'ի 19 Մարտի 1857 ամի:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԴՐԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

Հասարակաց Մատենադարանի  
և

բուժեանցովաքիյ թանգարանի ըի՝ զնոր նուիրանս Զերոյին Գերազան-  
(Մուղէումի):

28 Հոկտեմբերի 1858 ամի.

Համար 1170:

ՈՂՈՐՄԱԾ ՏԵՐ

ԳՐԱՅԻԷԼ ԱՊԵՀՅԱՆՈՎԵԼ.

Ընկալեալ իմ՝ ընդ յարաբերական

թղթոյդ որ ՚ի 25-էն այսր Հոկտեմբե-

րումեանցովաքիյ թանգարանի ըի՝ զնոր նուիրանս Զերոյին Գերազան-

պատկերական առ Կայսերական Հասարա-

կաց Մատենադարանն, որք են՝ բաց

յայլոց՝ և 6 կենդանագիր պատկերք

հոչակաւոր և հոյակապ գերդաստանին

Լազարեանց, յորոց ՚ի թիւս և վերա-

պատուելոցն ՚ի Մատենադարանէն՝ մե-

ծարոյ Անդամոց նորին՝ Յովհաննու և

Խաչատրոյ Յովակիմեանց, պարտս ինձ

Համարիմ կարի իմն ախորժականս յայտ

նի կացուցանել Զեղ, Ողորմած ՏԵՐ,

զանկեղծ շնորհակալիս մերոյս Մատե-

նադարանի վասն այսր նուիրաբերու-

թեան, որ այնու առաւել մեծարդի է

զի Մատենադարանն, առ գժբաղդու-

թեան, չունէր ցարդ զկենդանագիրս

յիշատակելոցդ երկոցունց արանց, որք

՚ի վեհանձնական և յաշխարհոճանօթ

ճգունս իւրեանց առ օգտի Հասարա-

կաց, ցուցին բանիւ և արդեամբք զայնօ-

րինակ զառ ՚ի սրտէ զջերմ Համակ-

րութիւն ՚ի բարդաւաճանս և ՚ի Հա-

մորին Գերազանցութեան ըլսութիւն մերոյս Գրանոցի, բայց և,

Գ. Ա. ՓՈՓՈՎԼԻ, յայլմէ կողմանէ վասն այն՝ զի Զեղ


Տեառն Կերպին Գերազանցութիւն նուիրելով Հասա-

րուհրդականի և Ասոկեանի: ըակացն Մատենադարանի զՏեարց Լա-

զարեանց կենդանագիրս, 'ի բայ բարձիք 'ի Զերոյդ հաւաքումէ զլաւագոյն նկարագիրս զարանցն մեծագործաց երևելեաց 'ի բաղմօրինակ հանդիսի աղդաշահ վաստակոց, զարանցն՝ զորոց Դուք այնպէս իրաւամբք հաճեցայք խօսել 'ի յարաբերականն Զեր առիս թղթի, կոչելով զնոստ Արա Բարութեան: 'Ի կնիք բանիցս՝ օդտիմ ես դիպուածովս այսուիկ 'ի վերանորոգումն վստահութեանց իմովս առ Զեղ կատարելագոյն յարդանօք և հաւատարմութեամք:

(Կ Բնագրին) Պարսկա Ա. Կօթֆ:





«Ազգային գրադարան



NL0243645

